

№№ 8—9 ՕԳՈՍՏՈՍ—ՍԵՊՏԵՄԲԵՐ 1887

13

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№№ 8—9

Խաչլուայ Լիճը (աւանդութիւն) . . . . . Գ. Աստուածատրեանց։
Դաշտային կեանք . . . . . Ամբրոս։
Խաղ (անգոյծ մանուկը և աշակերտաց խումբ) Մուշեղ Մամիկոնեան։
Մի աղջիկ, որը աւելի գգաստ էր քան կայսրը (Թարգ. Ֆրանսէրենից) . . . . . Օր. Սաթենիկ Շեկեանց։
Երեք վարդ (բանաստեղծութիւն) . . . . . Կոնո։
Վահան Մամիկոնեան (Հայոց Պատմութիւնից) . Ա. Բաբախանեան։
Մօր գերեզմանի վրայ (ոտանաւոր) . . . . . Աղէք. Ծատուրեան։
Ռոբինզոն . . . . . Փ. Վարդանեան։

ԳԻՏՈՒԹԻՒՆ

Ընտանեկան զբոյցները (Դիսանդէից) . . . . Խաչիկ։

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Ծորոլոր Ժ . . . . . Ն. Տէր-Աւետիքեան։

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Առողջապահական գիտելիք։ Ճանապարհորդութիւն դէպի բևեռը։ Երգելու և Հաւելու օգուտը։ Թնդանօթի և Հրացանի փոխարէն։ Ծողների մասնագիտութիւնը իրանց գաւակների վերաբերութեամբ։

ԱՅԼԵՒԱՅԼՔ

Աֆրիկայի գաղջները։

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Հանելուկներ։ Խնդիր։ Շուտասելուկ։ Բերուս։ Նախընթաց №-ի մէջ եղած հանելուկների և ցանցերի բացատրութիւնը։ Յայտարարութիւններ

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

Իմ ստացած ապաւորութիւնը պ. Բաֆֆու «Կայծերի» երկրորդ հատորից . . . . . Ղ. Աղայեանց։
Ընդհանուր հակումների կրթութեան մասին . . Ս. Բէգ-Նազարեանց։
Խառն Լուրեր։ Մի ուղերութիւն։ Օրմանեան սրբազան։ Արութիւն եւ Մանուէլի բաժանորդներ։ Խմբագրութեանս ստացած գրքեր։ Քնարիկ Մանկական եւ Երեխաները ու նրանց Բարեկամները։ «Աղբիւրի» խմբագրութիւն։ „Родникъ“։ Հայերէն երաժշտական մի տետրակ։ Ընթերցող հասարակութեան։ «Աղբիւրի» Պատասխաններ։

ԱՋԴ

Գործադիր—Մնայուն Յանձնաժողովոյ կատարող Յովսէփայ Իզմիրեանց.

Սահակ Մեսրոպեան Գրական Մրցանակաբաշխութիւնն՝ որ բարեյիշատակ Յովսէփ Իզմիրեանցի կողմէն հաստատուած է, պիտի կատարի յառաջիկայ 1888 տարւոյ Սրբոց Թարգմանչաց տօնի օրն։ Հետևապէս Գործադիր—Մնայուն Յանձնաժողովն կը փութայ հրաւիրել այն հեղինակներն՝ որ ունին ազգային լեզուաքննութեան (Փիլոլոգիի) և պատմութեան վերաբերեալ երկասիրութիւններ ձեռագիր կամ տպագիր, և կը փափաքին մասնակցիլ մրցանակաբաշխութեան, փութան յուղարկել դայնս առ Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրն ի Կոստանդնապոլիս, մինչև յառաջիկայ Յունվարի սկիզբն։

Տպագիր երկասիրութիւնք հարկէ որ երեք օրինակ յուղարկուին։

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՐԱՖՖԻԻ

ԿԱՅԾԵՐԻ

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ

ԳԻՆՆ է 2 ր. 50 կ.

Ճանապարհի ծախքը հեղինակի վրայ է։ Գիրքը բաղկացած է 722 մեծադիր երեսներից։ Վաճառվում է «Թիֆլիսի Կենտրոնական դրավաճառանոցում» և հեղինակի մօտ։

Բաժանորդները պէտք է կանխաւէս յայտնեն իրանց հասցէն, եթէ տեղափոխուել են իրանց նախկին տեղից։

ԲԱԳՎՈՒՄ

ԿԱՍՊԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅՈՒՄ

Ծախվում են «ԱՂԲԻՒՐԻ» հրատարակութիւնները։

ԱԹԵԽԵԼՔ

ՕՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ

Հրատարակվում է ամեն օր և մեծ դիրքով տարեկան գինը օտարերկրների համար ։ 8 ֆրանկ է։ Հասցէն՝ Constantinople. Direction de journal „Areveik“ Noradonnghian Han, Calata.

L'AMI DES ENFANTS
ILLUSTRÉ
OU
L'ÉDUCATION
A l'Ecole et dans la Famille.
Directeur: l'Abbé Roussel.

Neuvième année; abonnements un an: 10 fr. Etranger, 12 fr. Un numèro, 30 centimes. Administration, 40, rue La Fontaine, Paris-Auteuil dépot: 15, rue Fékou (près saint-Sulpice) Paris.

Պ. ԼԷՕԻ ՎԷՊ ԹԷ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(ՂԱՐԱԲԱՂԻ ԱՆՑԵԱԼԸ ԱՊՐԵՍ ԲԵԿՆԱԶԱՐԵԱՆԻ ԳՐՉԻ ՏԱԿ)

Հրատարակութիւն Վ. Դադեանի, Շուշում։

ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆՆՍ ՄԷՋ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ՄԵՐ ՀԵՏԵՒԵԱԼ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

	ռ.	կ.
1) «Աղբիւրի» 1883 թ. փառակազմ	10	—
նոյնը անկազմ	8	—
2) » 1884 թ. փառակազմ	4	—
նոյնը անկազմ	3	—
3) » 1885 թ. փառակազմ	10	—
նոյնը անկազմ	8	—
4) » 1886 թ. փառակազմ	10	—
նոյնը անկազմ	8	—
5) Փայտաշէն խրճթից՝ սպիտակ տուները (Ջեմս Գարֆիլդի կենսագր.) պատկերազարդ	„	60
6) Հսկայ մրջիւն (պատկերազարդ)	„	40
7) Ժան Բատիստ Լիւլիի մանկութիւնը	„	10
8) Ոսկի հէնրիկ I սերիա . .	„	30
նոյն „ II սերիա . . .	„	05
9) Բուսական աշխարհից՝ մշակուած և անմշակ ծառի կեանքը	„	30
10) Զարանձի Արամի արկածները (38 պատկերներով) .	„	50
11) Ֆրիհօֆ դիւցաղն (նորմանական հին զրոյց, պատկերազարդ)	„	40
Ն. Տ.-ԱԼԵՏԻՔԵԱՆ Քնար խօսնակ	„	50
ԼԻՏՎՕՍ Փօղնանի ուսու ցչի օրազրից	„	20
ՍԱՖՕՆՍ ԴՕԴԷ երկու մանրավէպ	„	15
ԱՆԳԵՐՍԷՆ Սխալ և խոզարած	„	20
ԴԻԿԷՆՍ Հարս և սկիսուր .	„	15
Կ. Մ. ՇԱՀՆՍԶԱՐԵԱՆ Ղբլրցի կընանուց պլենը-փէշակը (Ղարաբաղի կեանքից)	„	20

14

ՄՇԱԿ

Հրատարակվում է Թիֆլիզում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով։ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռ. է, վեց ամսուանը 6 ռ.։

Գրուել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԹՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բաքոնսկայա և Բազարնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը)։

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրուելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ». իսկ արտասահմանից. Tiflis. Rédaction du journal arménien «MSCHAK»

Խմբ.-Հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Պատկերազարդ հրատարակութիւն ամիսը երկու անգամ. տարեկան գինը 4 ռ.։ Հրատարակվում է Պոլսում. տարածվում կարելի է «Աղբիւր» ամսագրի խմբագրատանը։

ԳԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Հանդէս ամսեայ

Հրատարակվում է Կ. Պոլսում.

Տնօրէն խմբ. Տաղավարեան

Բաժանորդ գրուել կարելի է «Աղբիւրի» խմբագրատանը։ Գինն է 2 ր. 50 կ.

ԱՐԱՐԱՏ

Կրօնական, պատմական, բանասիրական ամսագիր. տարեկան գինը Ռուսաստանում 4 ր.։ Հասցէն՝

Св. Эчміадзинъ, Ред. „Араратъ“.

Ս. Վ. ԱՐՂՈՒԹԵԱՆԻ

Մանկական Պարտէզ երկու սեռի երեխաների միասնաբար ուսման համար և օրիորդաց գիշերօթիկ ուսումնարան։

ԱԳԲՈՒՐ

ՄԻՇՄԱԿԱՑ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ

(Երեխաների եւ դաստիարակների համար)

Հրատարակվում է միեւնոյն դիրքով, միեւնոյն ուղղութիւնով եւ նոյն աշխատակիցների մասնակցութիւնով։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Агбюръ“, իսկ արտասահմանից՝ Tiflis (Caucase) Rédaction du journal „AGBUR“.

Խմբ.-Հրատ. Տ. Նաղարեանց։

Լոյս տեսաւ

Գ. Կաֆեանի թարգմանութեամբ

ՕՐ. ՍԻՒԶԱՆ ԿՕՐՆԱՅԻ

ԵՐԵԽԱՆԵՐԸ

ԵՒ

ՆՐԱՆՑ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ

Վերնագրով մանկական պատկերազարդ շքեղ հրատարակութիւնը։ Գինը 50 կ. է, «Աղբիւրի» բաժանորդների համար 40 կ.

Ծախվում է «Աղբիւրի» խմբագրատանը եւ Թիֆլիզի յայտնի գրավաճառանոցներում։

ԲԱԶՄԱՎԷՊ

Եռամսեայ պատկերազարդ հանդիսարան.

Բաժանորդագրութեան գինն է կանխիկ վճարելի. 10 ֆռ. (4 ռ.)

Հասցէն՝ Au Rédacteur de la *Revue Polyhistore*, à Venise, Ile de St. Lazare.

РОДНИКЪ

Дѣтск. иллюстр. ежемѣсячн. журн. подпис. цѣн. съ прилож. „Воспит. и Обучен.—6 р. Въ видѣ преміи год. под. пис. пол. тетр.-альб. „по Рус. Землѣ“.

Ред.-Изд. Е. Сысоева. Подпис. цен- 6 р. съ пересыл. С. П. Б. Никольская площ. д. № 4.

ԱՂԲԻՒՐ

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԵԽԱՆԵՐՔ

ԵՒ

ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

№№ 8—9

ՕԳՈՍՏՈՍ—ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԹԻՖԼԻԶ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, № 1|2
1887

Дозволено цензурою, Тифлисъ, 12 Сентября 1887 г.

Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 1 и 2

ԽԱՉԼՈՒԱՅ ԼԻՃԸ.

(Աւանդութիւն [1])

Ատ ու շատ դարեր մեզանից առաջ մի
Թագաւոր կար,
Անունն էր Պուօշ, ինքը զօրաւոր, աղ-
նիւ ու արդար։
Չէր նա կռուասէր. նստում էր նա իր
Լաթար քաղաքում,
Թէպէտ նրա վախը տիրում էր հեռու
հեռու տեղերում։
Փառասէր չէր նա, թէպէտ կարող էր
ամեն բան ուժով.
Աշխարհք կը քանդէր, թէ սիրտը ուզէր,
Հալունի թրով։

Հալունի թուրը, Հալունի թուրը,
Ամէն բան կանէ Հալունի թուրը.
Չի լինիլ նորան աշխարհում նման,
Կանէ ամեն բան Հալունի թուրը։

Օ՜, նա չէ շինուած հողեղէն ձեռքով,
Անձեռագործ է Հալունի թուրը.
Չէ նա խորասան և ոչ ալմասից—
Ալմաս կըկտրէ Հալունի թուրը։

---

[1]) Տես Հ. Գ. Սրուանձտեանի Համով—Հոտով, երես 75.

Կրակոտ ամպերում, կայծակների հետ
Կռել է կոփուել Հալումնի թուրը.
Կրակոտ ամպերում կայծակների հետ
Աշխարհ է իջել Հալումնի թուրը։

Նորան տիրողը աշխարհ կըտիրէ,
Աշխարհ կըղերէ Հալումնի թրով.
Դէվերի մեծին ղերի կըբերէ,
Ղղթակապ կանէ Հալումնի թրով։

Արքայազնուհին Զինումաչինի
Իր հարս կըշինի Հալումնի թրով,
Եալբուս սարն էլ որ նրա առաջ ելնի,
Երկու կէս կանէ Հալումնի թրով։

Հալումնի թրով, Հալումնի թրով,
Ամէն բան կանես Հալումնի թրով,
Չի լինի նորան աշխարհում նման,
Կանես ամեն բան Հալումնի թրով։

Ահա թէ ինչու Պռօշ թագաւորից ամենքն են սարսում,
Թէպէտ նրա մտքով մի մարդուվնասել անգամ չէր անցնում.
Եւ ով չէր սարսի. մեծ էր Հալումնի թրի զօրութիւն.
Բայց չէր ցանկանում Պռօշ թագաւորը փառք, իշխանութիւն...
Ո՛չ ոք չըգիտէր թէ քանի տարի Պռօշի պապերը
Կրում էին իբրև մի անգին աւանդ Հալումնի թուրը,—
Թէ ինչ հրաշքով ընկել էր սուրը աշխարհի վերան,
Թէ ո՞րը Պռօշի մեծ նախնիքներից ձեռք էր բերել այն,—
Յայտնի չէ սրբի սկզբնաւորութեան մութ պատմութիւնը,
Լռում է մինչև անգամ դրա մասին աւանդութիւնը։
Գիտեն այս միայն, ու Պռօշի նախնիք այնքան տարիներ

Իրանց զօրութիւնն և ոյժը երբէք ի չար չեն գործ դրել։
Պռօշն էլ հետևեց իր նախնիքներին,—ստանալով սուրը
Հօր մահուան ժամին, առաւ ուանդը, խոստացաւ հօրը.
«Հայրիկ, երդւում եմ քո տուած սրով, որ քեզ հետևիմ,
Զարի կործանիչ, բարու հաստատիչ հանապազ լինիմ»։
Այսպէս էլ արաւ։ Քառասուն տարի Պռօշի ձեռքում
Հաւլունի թուրը կայծակի նման փայլում էր, վառվում,
Բայց նորա ձեռքից մի անմեղ արիւն երբէք չթափուեց,
Կայքից ու կեանքից սրբի միջոցաւ մի մարդ չզրկուեց,
Մի կին լաց չեղաւ իր ամուսինը նորա սատճառաւ,
Մի տղայ չորբացաւ, կորցնելով ծնողներ ու հանտէրացաւ.
Ո՛չ մի թագաւոր կամ արդար իշխան չընկաւ իր դահից,
Ո՛չ մի ժողովուրդ չզրկուեց իրա ազատութիւնից։
Ինչ բան բարի էր ծաղկեցնում էր նա իր կարող աջով,
Ինչ բան որ չար էր, ջնջում, կործանում Հաւլունի թրով։
Բոլոր հրեշներին, չար դաղանները աշխարհից կտրեց,
Հսկայ դէվերի քառասուն գլխներ մի դարկով թուցրեց.
Մտաւ և ներքին մթին աշխարհը նա լոյս աշխարհից.
Մարդկանց ազատեց այնտեղ վիշապի չար գերութիւնից։—
Եւ ինչ չէր անի. մեծ էր Հաւլունի թրի զօրութիւնը,
Բայց չէր ցանկանում Պռօշ թաւաւորը փառք, իշխանութիւն...
«Թող ապրեն ազատ ու խաղաղ ազգեր, բաղմանան մարդիկ,
Լաթար քաղաքս լաւ կառավարեմ, այն էլ է հերիք»։
Եւ լիանում էր Լաթար քաղաքը ամեն բարիքով,
Զգում շէնացած Խաչերայ լճի կանաչ ափերով։
Բայց ինչ կայ արդեօք յաւիտենական այս աշխարհի մէջ—
Պռօշ թագաւորի գերեզմին էլ սպիտակ մաղերով ծածկուեց.
Այն հզօր աջը, որ դողացնում էր ամբողջ աշխարհը,
Չէր կարում վերցնել այլ ևս յաղթական Հաւլունի թուրը։
Ընկաւ Պռօշը, ընկաւ ուժահատ մահուան մահիճը,
Գիտէր, պիտ չոգէր շուտով նրա առաջ մահուան հրեշտակը։

Նա մտածում էր. «Ահա մօտեցաւ իմ մահուան օրը,
Ո՞վ է իմ ժառանգ, ո՞ւմ պիտի յանձնեմ Հալունի թուրը»։
Եօթ որդի ունէր եօթ սարի գլխին եօթ բերդի իշխան,
Իրարից վատթար ծարաւի եղբայր իւր եղբօր արեան։
«Որ՞ին տամ արդեօք, ո՛չ ոք սոցանից չէ սրբիս արժան։
Ո՛հ, իմ մահից յետ արեան հեղեղներ պիտի ընթանան,
Պիտի վեց անգէն եղբայրներ գլխներ կտրած թրպրտան,
Հալունի թուրը պիտ դառնայ պատճառ եղբայրասպա-
նութեան։
Ո՛չ, այս չի լինիլ, ո՛չ, մինչև այժմ նա չար չի եղել,
Չ'պիտի լինի նա չարի պատճառ մահից յետոյ էլ.
Մօտեցաւ ժամը. շուտ թողնելու եմ ցաւոտ աշխարհը,
Շուտ կ'անհետանայ երկրիս երեսից Հալունի թուրը»։
Հրամայեց կանչել իրա մեծ որդուն։ Ներս եկաւ որդին
Բլէջանու բերդից՝ լսելու իր հօր կտակը վերջին։

«Որդի՛, մեռնում եմ, վերջին կտակս յանձնում եմ ես քեզ.
Բայց այն դեռ ևս իմ մահից առաջ պիտի կատարես»։

—Հայրի՛կ, պատրաստ եմ վերջին կտակդ միշտ կատարելու։
Տուր ինձ, թէ կուզես, Հալունի թուրը՝ աշխարհ քանդելու։—

«Այո՛, քեզ կրտամ Հալունի թուրը, աշխարհ մի քանդիր,
Հալունի թուրը տա՛ր ու խաչլուայ ծովը շպրտիր»։

Առաւ մեծ որդին Հալունի թուրը, բայց հօրը խաբեց.
Ո՛չ թէ ծով ձգեց, այլ հօրից ծածուկ մի տեղ թաքցրեց

«Որդի, ի՞նչ արիր Հալունի թուրը,
Ձգեցի՞ր, ասա՛, խաչլուայ ծովը»։

—Այո, այո՛, Հայր, Հալունի թուրը
Տարայ ձգեցի խաչլուայ ծովը։—

Տեսա՞ր ինչ եղաւ խաչլուայ ծովը,
Երբոր ձգեցիր Հալունի թուրը»։

—Հայր, ոչինչ չեղաւ Խաչլուայ ծովը,
Բայց ես.... ձգել եմ Հալլունի թուրը։—

«Ո՛չ, սուտ ես ասում, սուտ, այդ ես գիտեմ,
Անարժան որդիս խաբում է Հօրը.
Գնա բեր շուտով, թէ չէ՝ կանիծեմ,
Գլխիդ կրճաքի Հալլունի թուրը»։

Գնաց դողալով որդին, յետ բերեց Հալլունի թուրը,
Իւր երկրորդ որդուն հրամայեց կանչեն Պռօշ թագաւորը։

«Որդի, մեռնում եմ, վերջին կտակս այժմ յանձնում եմ քեզ,
Բայց այն դեռ ևս իմ մահիցս առաջ պիտի կատարես»։

—Հայրիկ, պատրաստ եմ վերջին կտակդ միշտ կատարելու,
Տուր ինձ, թէ կուզես, Հալլունի թուրը՝ աշխարհ քանդելու։

«Այո՛ քեզ կրտամ Հալլունի թուրը, աշխարհ մի՛ քանդիր
Հալլունի թուրը տար ու Խաչլուայ ծովը շպրտիր։

Առաւ նա նոյնպէս Հալլունի թուրը, բայց Հօրը խաբեց,
Ո՛չ թէ ծով ձգեց, այլ Հօրից ծածուկ մի տեղ թաքցրեց։

«Որդի՛, ինչ արիր Հալլունի թուրը,
Ձգեցի՞ր, ասա՛, Խաչլուայ ծովը»։

—Այո, այո, Հայր, Հալլունի թուրը
Տարայ ձգեցի Խաչլուայ ծովը։

«Տեսա՞ր ինչ եղաւ Խաչլուայ ծովը,
Երբոր ձգեցիր Հալլունի թուրը»։

—Հայր, ոչինչ չեղաւ Խաչլուայ ծովը
Բայց ես ձգել եմ Հալլունի թուրը։—

«Գոռ էլ ես, դու էլ սուտ ասում, գիտեմ,
Անարժան որդիս խաբում է հօրը,
Գընա բեր շուտով, թէ չէ՝ կանիծեմ,
Գլխիդ կրճաքի Հալլունի թուրը»։

Գնաց դողալով որդին, յետ բերեց Հալլունի թուրը։
Իւր երրորդ որդուն հրամայեց կանչել Պռօշ թագաւորը,
Բայց երրորդ որդին, մնացած երեքն էլ այնպէս արեցին,
Մինչև որ հերթը հասաւ եօթ որդոց ամենից փոքրին։
Եկաւ և փոքրը. «Որդի, դու գիտես ինչեր եմ արած,
Բայց այժմ մեռնում եմ եօթ որդկերանցով, բայց անտէ-
բացած,
Գոնէ դու լսիր վերջին կտակս, այժմ յանձնում եմ քեզ,
Բայց այն, որդեակ իմ, դեռ մահիցս առաջ պիտի կատարես։

—Հայրիկ, պատրաստ եմ վերջին կտակդ միշտ կատարելու,
Սա՛ թէ կուզես՝ պատրաստ եմ Խաչլուայ ծովը ընկնելու։—

«Ո՛չ, ոչ, չեմ ուզում, որդեակ, Խաչլուայ ծովը մի՛ ընկնիր,
Կրտամ Հալլունի թուրը. սա՛ռ դու այն ծովը շպրտիր»։

Օրը ուրբաթ էր, առաւ նա սուրը և ծովը ձգեց,
Եկաւ, դողում էր որսորդի ձեռքից փախած քօշի պէս։

—Որդի՛, դողում ես, ասա՛ ինչ արիր,
Ծովը ձգեցի՛ր Հալլունի թուրը.

«Հայրիկ, սարսում եմ, այլ մի՛ հարցրնիր.
Ո՛հ, ինչե՞ր չարաւ Խաչլուայ ծովը։

«Չէի մօտեցած դեռ ևս ծովին,
Արևն երկնքում իւր գլուխը թաքցրեց,
Սև ամպից ելաւ սատանի քամին
Խաւար ու մռայլ աշխարհս պատեց։

«Փոտեցայ ծովին, ա՜խ, մեր սիրուն ծով
Իւր նախկին գոյնը այլ էս չունէր,
Ժանտ դէվի նման՝ պղտոր ջրերով,
Մի համեղ որսի կարծես սպասում էր։

«Ծովը ձգեցի Հալլունի թուրը—
Յանկարծ մի գոռոց ծովի յատակից—
Մեծ իրարանցում ծովի խորերը.
Ահեղ արձագանգ ձայնեց երկնքից։

«Ջրերը լեռնացան ու իրար անցան
Երկինք էր հասնում ծովի փրփուրը,
Յանկարծ մեր Խաչլուն բացեց իր բերան,
Դէվի պէս կլանեց Հալլունի թուրը։

«Ահեղ փոթորիկ, աղմուկ, որոտում...
Որին նայեցի՝ ծովին, թ՝երկնքին
Իմ ոսքերի տակ երկիրն էր դողում—
Ես էլ թուլացայ և ընկայ գետին։

«Կրկին նայեցի,—ոչինչ չըտեսայ,
Դիշերուան մռայլը աշխարհս էր պատել,
Ամպեր, ալիքներ դարսած իրար վրայ,
Երկինքն էլ երկրի հետ էր միացել։

«Ծովի խորերից բիւրաւոր ձայներ
Խառն ի խուռն ու խուլ որոտում էին,
Կարծես բիւրաւոր քաջքերի դնդեր
Ծովի յատակում մարտնչում էին։

«Հայրիկ, դողում եմ, այլ մի յիշեցնիր
Ձեմ կարող պատմել ես իմ լեզուովը,
Հայրիկ, սարսում եմ, այլ մի՛ հարցընիր,
Ո՛հ, ինչե՞ր չարաւ Խաչլուայ ծովը»։

—Այո՛, այդպէս է, դու կատարել ես... առ իմ օրհնութիւն։
Հանգիստ կ՚մեռնեմ. Լաթար քաղաքս էլ քեզ ժառանգութիւն։

Անցան տարիներ ու դարեր անհետ,
Աշխարհիս վերայ շատ բան փոխուեցաւ,
Պռոշի սերունդն էլ նորա մահից յետ
Երկրիս երեսից շուտ անհետացաւ։

Բայց ժողովրդի սրտից չէ կորել
Հալունի թրի վառ պատմութիւնը,
Նա ոգևորուած միշտ կարայ պատմել
Պռոշ թագաւորի աւանդութիւնը։

Նա քեզ ցոյց կըտայ մի սուեր աւան,
Կասէ. «Այստեղ էր Պռոշ արքան կենում,
Այս Լաթար քաղքից առիւծի նման
Ձրջակայ ազգաց սարսափ էր ազդում»։

Նա քեզ ցոյց կըտայ մի պղտոր լճակ,
Կասէ. «Տես, սա է Խաչլուայ ծովը,
Հէյ ճամբորդ, սա չէ մի ծով Հատսրակ—
Այստեղ է թաղուած Հալունի թուրը»։

Թէ հարցնես նորան իբրև կարեկից՝
—Ինչո՞ւ է պղտոր ձեր ծովի ջուրը,—
Կասէ. «Այսպէս է եղած այն օրից,
Երբ այստեղ ընկաւ Հալունի թուրը։»

Նա քեզ կըպատմէ, թէ ամեն ուրբաթ
Խաչլուայ ծովը փրփրում է կատղում,
Իրար է զարկում ջրերը լեռնացած,
Ծովի յատակից ձայներ են լսվում....

Իսկ եթէ սորա պատճառն հարցրիր,
Նա խորագետի դէմք է ընդունում.
«Հէյ օտարական, էլ մի՛ հարցնիր
Քաջքեր են կռվում ծովի յատակում։

«Երբ որ Պռօշի փոքրահաս որդին
Ցանում էր ծովը Հալունի թուրը,
Դեռ չէր մօտեցել նա ծովի ափին,
Երբ իրար անցան ծովի քաջքերը։

«Կռիւ ու կոտորած ընկաւ նոցա մէջ,
Սուրն ընկզմուեցաւ խաչլուայ խորը,
Ահեղ կոտորած, բայց ոչոք յաղթեց
Եւ անտէր մնաց Հալունի թուրը։

«Ահա՛ այն օրից ամենայն ուրբաթ
Խաչլուայ ծովը փրփրում է կատղում,
Իրար է զարկում ջրեր լեռնացած,
Ծովի յատակից ձայներ են լսվում....

«Այդ հին կռիւն է կրկին նորոգվում,
Ընկնում են իրար վրայ կրկին քաջեր,
Անցան տարիներ, կռվում են կռվում,
Հալունի թրին չեն կարում տիրել։

«Բայց Պռօշ արքան սուրը կախարդեց,
Որ երբ ցամաքի մեր ծովի ջուրը,
Պիտի մի կտրիճ ծնուի մէկ անգամ
Աստուծու հրամանով առնէ այդ թուրը։

«Բայց քանի՞ հարիւր տարիներ անցան.
Ո՞վ կարայ պատմել, Պռօշի մահուանից—
Հիմա քեզ հարցնեմ, ո՛վ օտարական,
Ինչո՞ւ մի կաթիլ չէ պակսել ծովից։»

Գ. ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆՑ

ԴԱՇՏԱՅԻՆ ԿԵԱՆՔ

նձել էին ցորենը. կապել էին խուրձերը և դարսել էին փանջակներով կամ դէզերով դաշտի երեսին: Ամեն մի գաւառում խուրձերը կիտում են իրանց սեպհական եղանակով. երբեմն դարսում են այնպէս, որ հասկերը դէպի դուրս նայեն և չորանան ու հասունանան, եթէ տակաւին խակ են, կանաչ են. բայց աւհասարակ խուրձերը դնում են այնպէս, որ հասկերը դէպի ներս մտիկ տան, թաքնուին, որպէս զի հացահատիկները չը թրջուին անձրևից. սակայն ինչպէս էլ դարսուած լինին խուրձերը, հունձը այսու ամենայնիւ խիստ կերպարանափոխում է դաշտի պատկերը:

Մի քանի օր առաջ լռութիւն էր տիրում դաշտերում. լսում էր միայն չորացած հասկերի շփման սօսափիւնը, հասկերի՝ որոնք ալեծածան տատանվում էին և քնահար նինջ էին բերում մարդուս վրան. լոկ մի քանի թռչունները էին խանգարում այդ հանդարտութիւնը: Ճրնճղուկները, աբեզայ-ծիտերը, սարեկները, լորերը վեր էին էին պանում և կրկին սուզվում հացաբոյսերի մէջ. սակայն այդ ընդարձակ տարածութիւնը շատով ատոտիացնում է մեր տեսողութիւնը և մենք մտածում ենք. ինչ ամայութիւն է տրտերում: Ուրիշ բան է անտառներում, որոնց մէջ կայ այնքան կեանք, այնքան աղաղակ, ան-

թիւ անասունները և թռչունները. իսկ դաշտերում միայն լռութիւն է—ուրիշ ոչինչ։ Հունձը կարծես կենդանութիւն է տալիս դաշտերին. հէնց որ հունձը վերջանում է, յանկարծ կտրվում է արտերի լռութիւնը. վասն զի շրջակայ անտառներից և գիւղերից թափվում են բազմաթիւ թռչուններ, իրանց համար ճարակ գտնելու համար. խուրձերը և դէզերը սեւանում են նրանց վրայ նստած ճնճղուկներից, տատրակներից, սարեկներից և այլն։

Ազգի ազգի թռչունների յոգներամ վտառները՝ վաղ այդուց մինչև գիշերուայ ծայրը, ճռւոզելով, ցատկտելով կոյահարում են հացաբոյսերի հատիկները, որոնք թափուած էին հունձի ժամանակ արտերի ամբողջ տարածութեան վրայ և նոյն-իսկ դէզերից ու վանջակներից դողտնալով դատարկելով հատկերը մէկը միւսի ետևից։ Մի խումբը կշտանալով հեռանում է, մտնում է միւսը և այլն։

Կարծում ես լաց պիտի լինէր հողագործը այդքան

կերող թռչունը գողերի պատճառով. բայց շատ քիչ է պատահում, որ գիւղացիները զանգատուին դրանց մասին. թռչունները չեն այն ահարկու թշնամիները, որոնց անունն իսկ լսելիս՝ սարսափահար է լինում երկրագործը. կան շատ ահաւոր ոստիններ շինականի քրանաթոր աշխատութիւնը անպտուղ դարձնող, ինչպէս են մորեխը, դաշտամուկը, խլուրտը, առնատը, դանդան բզեզներ, որդներ և այլն:

Եւ գիտող մարդը նկատում է որ յիշեալ թռչուններից շատ շատերը թէպէտ անկոչ հիւրի պէս վայելում են մեր հացաբոյսերի հատիկներից բաւական քանակութիւն, բայց և գիտեն նրանք պաշտպանել իրանց և մեր հացը: Օրինակ՝ բազէն, ցինը, ուրուրը, անգղը մեծ թռով դիշատում են և ուտում դաշտային մուկերը, խլուրտները, առնատները: Սարեկները, անշուշտ շատերիդ յայտնի կը լինի, որ մորեխ երևցած տարին ամբողջ գիւղերի արտերը փրկում է ջարդելով և սպանելով անթիւ մորեխների ամբակաւոր երամակներ: Միւս մանր թռչունները նմանապէս փչացնում են բազմահամար վնասակար ճիճուներ, որդներ, բզեզներ, որոնցից թէ մեր երկրում, մանաւանդ թէ ուրիշ երկրներում ամբողջ արտեր են փչանում և անբեր լինում:

Իլ ուելի մօտ ծանօթ անալով արտերի վիճակին, մենք կարող ենք կրկին մի քանի հանդամանքներ յառաջ բերել դաշտային կեանքից: Բացի վերևը յիշած զանազան մանր գետնաբնակ գազաններից, որդները, այլ և զանազան կարգի թռչունները, որոնք պտտում են արտերի շուրջը, երբեմն նոյնպէս ագահ գայլը կամ խորամանկ աղուէսը, մանաւանդ գիշերները, թաքնվում են հասկալից արտերում, գարանում եղած սպասում են յարձակման ժամին, որ ճանդեն իրանց որսը: Հենց որ յոդնած հավիւը մի քիչ ննջում է, իսկ շները թմրում են գիշերային մթութեան միջոցին, արիւնարբու գայլը կամաց եկնում է արտից և գիտում է դէպի հօտը: Այդ օրինակ գազաններին ի հարկէ հարկաւոր չէ և ոչ մի հատիկ ցորեն, արտերը նրանց համար ծառայում են ինչպէս պտտսպարաններ:

Դաշտային կեանքով հետաքրքրուողները դարձեալ ուրիշ շատ տեսարանների կարող են հանդիպել. երբեմն կաքաւները իրանց ձագուկներով անցնում են արտի մո-

տով, կամ արտերում ապրող բաղմաթիւ լորերը դուրս են գալիս դէպի պարապ կածանները, յանկարծ տեսնում ես սրատես, սեւակն բաղէն վերեւից սլացաւ ինչպէս պլենդաձիգ նետ, յափշտակեց մի լորիկ և ճանկերի մէջ խեղդելով վեր սմբարձաւ։ Սակայն ինչ որ էլ լինի, մարդիկ կարողանում են հերկել դաշտերը, ցանել, հնձել, կասել, ալիւր աղալ և հաց թխել ու ուտել։ Դաշտերում բացի թշնամիներից, ուրեմն մարդիկ ունին և բարեկամներ։ Մեր

շուրջը մշտական մենք ունինք շատ թշնամիներ և բարեկամներ. չի կարելի թշնամուն յաղթել, եթէ նրան լաւ չենք ճանաչում և բարեկամից օգտուելու համար, պէտք է նմանապէս լաւ ճանաչել նրան. այս խրատը ցանկալի էր, որ միտը պահէր և հասկանար այս յօդուածը կարդալուց յետոյ սիրելի ընթերցողներից ամեն մէկը։

ԱՄԲՐՈՍ

ԽԱՂ

Ա. ԱՂԱԿԵՐՏ

(ասում է անգործ մանկանը).

Վ դու մանուկ ծաղկահասակ,
Հերիք անգործ, պարապ ման դաս.
Զուր մի կորցնիր ոսկի ժամերդ,
Թէ չէ տդէտ, բիրտ կըմնաս։

Բ. ԱՂԱԿԵՐՏ

Խղճա՛, խղճա՛ քո օրերին,
Արդէն անցաւ քո ութ տարին.
Ի՞նչ ես սովրել թափառելով,
Հասկացե՞լ ես չարն ու բարին։

Գ. ԱՂԱԿԵՐՏ

Զէ՞ որ մեղք է խղճուկ Հայրըդ,
Որ կ՚աշխատի միշտ անդադար,
Թէ ինչ է՝ իւր որդին մի օր
Գտնայ լաւ մարդ իրան համար։

ԱՂԱԿԵՐՏԱՅ ԽՈՒՄԲԸ

Գոնէ նայէր ու մեզ առ քեզ
Աշխատութեան օրինակ,
Եւ մի անգին ժամանակըդ
Փչացներ շարունակ։

Ե՛կ, ե՛կ, հերիք պարապ շրջես,
Դորանից քեզ օգուտ չըկայ.
Եկ վարժարան, կարդա մեզ հետ,
Որ խեղճ Հայրըդ ուրախանայ։

ԱՆԴՈՐԾ ՄԱՆՈՒԿ

Ինչի կ'գամ ձեր վարժարան.
Որ զուր զերի ես դառնամ.
Ազատ ուրախ փողոցներում
Լաւ չէ՞ խաղամ ու մանդամ։

ԱՇԱԿԵՐՏԱՑ ԽՈՒՄԲԸ

Մենք էլ երբ որ բոլորովին
Դասերս լաւ կը սերտենք,
Այն ժամանակ ազատ ուրախ
Խաղ կըխաղանք ու կ'երգենք։

ԱՆԴՈՐԾ ՄԱՆՈՒԿ

Հապա որ ձեզ վարժապետը
Միշտ կը ծեծէ, կը պատժէ.
Միթէ այդ վատ պատժաքանը
Գալ ու նստելը արժէ՞։

ԽՈՒՄԲԸ

Այստեղ ոչ թէ ծեծ ու պատիժ,
Այլ ուսում են մեզ տալիս
Միայն ծոյլ, վատ աշակերտը,
Նախատվում է ու լալիս։

ԱՆԴՈՐԾ ՄԱՆՈՒԿ

Հապա որ միշտ հրամանով
Դուք կը կանգնէք կը նստէք,
Եւ ինձ նման ուզած բոպէն
Ազատ մանդալ կարող չէք։

ԽՈՒՄԲԸ

Ով որ չունի կարգ ու կանոն,
Նա ասվում է անկիրթ մարդ,
Կարգ կանոնը մանկանց համար
Են գովական սիրուն զարդ։

Ե՛կ, ասում ենք, ե՛կ, վարժարան,
Ձեզ կշտանայ թափառելով.
Ում ուզում ես՝ գնա հարցուր,
Մարդ կը դառնաս ուսումով։

ԱՆԳՈՐԾ ՄԱՆՈՒԿ

Ես էլ կըդամ, հա էլ կըգամ,
Էլ չեմ շրջիլ պարապ զուր,
Ես էլ ձեզ հետ միշտ կը կարդամ,
Էլ չեմ ընկնիլ դռնէ դուռ։

ԽՈՒՄԲԸ

Ե՛կ մեզ մօտ, ե՛կ մեզ մօտ,
Քեզ կ՝ընդունենք մեծ սիրով.
Միասին, միասին,
Խաղանք, խնդանք երգելով։

ԲՈԼՈՐԸ

Եկէք, եղբայրք, թեւ թեւի տանք
Իրար գրկենք, ուրախանանք.
Քանի այսպէս դեռ մանուկ ենք
Ուսում առնենք, խնդանք, խաղանք։
Դէհ, եղբարք, դէհ, եղբարք,
Ուրախ երգենք ու խաղանք.

Ոչ ոք չունի մեզի նման
Ուրախ օրեր, զուարթ ժամեր,
Աշակերտաց կեանքն է անհոգ,
Սիրտն է մաքուր, գործն օգտաբեր։

Դեհ, եղբարք, դեհ, եղբարք,
Ուրախ երգենք ու խաղանք.

Կեցցէ, կեցցէ մանուկ հասակ,
Կեցցեն ուսում, խաղի ժամեր.
Կեցցէ յաւէտ մեր վարժարան,
Կեցցենք և մենք, աշակերտներ։

Պար բռնենք ու երգենք,
Քանի որ իրար հետ ենք.
Տրա՛յ լա՛յ, լա՛յ, տրա՛յ լա՛յ լա՛յ
Տրա՛յ լա՛յ, լա՛յ, լա՛յ, լա՛յ, լա՛յ։

ՄՈՒՇԵՂ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

ՄԻ ԱՂՋԻԿ,

ՈՐ ԱՒԵԼԻ ԶԳԱՍՏ ԷՐ

ՔԱՆ ԿԱՅՍՐԸ

Ի անդամ մի խեղճ մարդ ապրում էր մի խրճթի մէջ. նա ունէր միայն մի շատ զգաստ աղջիկ, որ ամեն տեղ գնում էր փող մուրալու. նա իր հօրն էլ սովորեցնում էր խելացի խօսել, որ կարողանար ձեռք բերել ինչ որ իրան պէտք էր: Մի օր խեղճ մարդը գնաց կայսրի մօտ և խնդրեց, որ մի բան տայ իրան: Կայսրը, զարմացած աղքատի խօսելու ձևի վրայ, հարցրեց, թէ նա ո՞վ էր և թէ ո՞վ էր նրան սովորեցրել այս տեսակ խօսելը:

—«Իմ աղջիկը, պատասխանեց նա:

—Իսկ քո աղջկանն ո՞վ է սովորեցրել, հարցրեց կայսրը:

«Աստուած է նրան սովորեցրել, ինչպէս և մեր վերջին ծայը թշուառութիւնը»:

Այն ժամանակ կայսրը նրան տուաւ երեսուն ձու և ասաց՝

«Տա՛ր այս ձուանները քո աղջկանը տուր և ասա՛, որ դրանցից փոքրիկ ճուտեր դուրս բերէ. եթէ չկարողանայ այդ անել, նրա համար վատ կըլինի»:

Խեղճ մարդը միանգամայն արտասուելով գնաց իր խրճիթը և բոլորը պատմեց իր աղջկան: Աղջիկն լսեցաւ որ ձուանները եփուած էին՝ և ասաց իր հօրը, որ գնայ հանդըստանայ, իսկ ինքը հետևեալ առաւօտ կըհոգայ ամեն բան: Հայրը հետևեց իւր աղջկայ խորհրդին և քնեց. իսկ նա վերցնելով մի կաթսայ, լցրեց նրան ջրով ու բակ-

լայով և դրեց կրակի վրայ. հետևեալ օրը, երբ բակլան եփուած էր, նա կանչեց իր հօրը և ասաց, որ վերցնէ մի արօր և եղներ և հերկէ այն ճանապարհի երկարութեամբ, որտեղով պիտի անցնէր կայսրը։

«Եւ, աւելացրեց նա, երբ դու կրտեսնես կայսրին, վերցրու բակլայից, ցանիր և բարձր ձայնով ասա՝

«Հը՜, իմ եղներ, Թող Աստուած ինքն ինձ խնամէ և բուսցնէ իմ եփած բակլան»։ Եւ եթէ կայսրը քեզ հարցնէ, թէ ինչպէս կարելի է որ եփած բակլան բուսնի, պատասխանիր նրան՝

«Այդ նոյնքան հեշտ է, որքան և պինդ ձուից ճուտ դուրս բերելը»։

Խեղճ մարդն արաւ, ինչ որ ցանկանում էր իր աղջիկը. նա դուրս գնաց, հերկեց, և երբ կայսրին տեսաւ, սկսեց կանչել՝

«Հը՜, իմ եղներ, Թող Աստուած ինքն ինձ խնամէ, բուսցնէ իմ եփած բակլան»։

Հէնց որ կայսրը լսեց այս խօսքերը, կանգ առաւ ճանապարհի մէջ տեղ և ասաց իսկոյն՝

«Խեղճ չիմարաղլուխ, ինչպէս կարելի է եփած բակլան բուսցնել»։

Խեղճ մարդը պատասխանեց՝

«Աղնիւ կայսր, այդ նոյնքան հեշտ է, որքան և պինդ ձուից ճուտ հանելը»։

Կայսրը հասկացաւ, որ աղջիկն էր իր հօրը յորդորել այնպէս վարուելու. նա ասաց իր ծառաներին, որ վերցնեն խեղճ մարդուն և բերեն իր առաջ. յետոյ նա տուաւ մի կանեփի փոքրիկ կապոց և ասաց՝

«Վերցրու այս. դու դրանից ինձ համար կըշինես առաղաստներ, թոկեր, և բոլորը, ինչ որ անհրաժեշտ է մի նաւի համար. եթէ ոչ, ես քո գլուխը կտրել կրտամ»։

Խեղճ մարդը վերցրեց կապոցը ոստիկ խռոված և

արտասուալից աչքերով վերադարձաւ դէպի իր աղջիկը, որին նա պատմեց ինչ որ անցել էր։ Աղջիկը նրան ասաց, որ գնայ քնի, խոստանալով որ ամեն բան ինքը կրհոգայ։ Հետևեալ օրը, նա մի փոքրիկ փայտէ կտոր վերցրեց, դարթեցրեց իր հօրը և ասաց՝

«Տար այս տաշեղը և տուր կայսրին. պէտք է նա շինէ դրանից ինձ համար մի իլիկ, մի կկոց և մի ճախարակ. յետոյ ես էլ կրկատարեմ նրա առաջարկութիւնը»։

Խեղճ մարդը մի անդամ ևս հնազանդեց իր աղջկայ խորհրդին. նա գնաց կայսրի մօտ, և նրան ասաց բոլորը ինչ որ սովորեցրել էին։

Երբ կայսրը լսեց այս, զարմացած մնաց և մտածեց, թէ ինչ կարող էր կրկին ասել. յետոյ, վերցնելով մի բաժակ, տուաւ խեղճին, ասելով՝

«Վերցրու այս բաժակը, տուր քո աղջկանը. ասա որ նա սրանով ցամաքեցնէ ծովը և մշակելու հող դարձնէ նրան»։

Խեղճ մարդը լալով հնազանդեցաւ, բաժակը տարաւ տուաւ աղջկանը և կրկնեց բառ առ բառ կայսրի խօսքերը։ Աղջիկը նրան ասաց, որ սպասէ մինչև հետևեալ օրը, երբ ինքն ամեն բան կարգի կրդնէր։ Հետևեալ առաւօտ, նա կանչեց իր հօրը, տուաւ մի լիտր կանեփ և ասաց՝

«Տար այս տուր կայսրին. թող նա սրանով խցէ աշխարհիս բոլոր գետերի աղբիւրները և գետաբերանները. դրանից յետոյ ես կրցամաքեցնեմ ծովը»։

Խեղճ մարդը գնաց և բոլորն ասաց կայսրին։

Այն ժամանակ կայսրը տեսաւ որ աղջիկը աւելի լաւ գիտէր քան թէ ինքը, հրամայեց, որ աղջկանն իր մօտ բերին. և երբ հայրը տարաւ իր աղջկան, և երկուսը միասին ողջունեցին կայսրին, նա ասաց՝

«Աղջիկս, խմացիր. այն ի՞նչն է, որ լսում է շատ հեռուից։

Աղջիկը պատասխանեց՝

«Ազնիւ կայսր, շատ հեռուից լսում է պատմունքը և խաբէութիւնը»։

Այն ժամանակ կայսրը ընելով իր մօրուքը, դարձաւ դէպի իր խորհրդականները և հարցրեց.

«Իմացէք, որքան արժէ իմ մօրուքը»։

Եւ երբ նրանք գնահատեցին, որը շատ, որը քիչ, աղջիկը պնդեց դէմ առ դէմ, որ ոչ մէկը չկարողացաւ դուշակել, և ասաց՝

«Կայսրի մօրուքը նոյնքան արժէ, որքան և անձրևի երեք կաթիլները ամառուայ երաշտութեան մէջ»։

Կայսրը հիացած մնաց և ասաց՝

«Սա ամենից լաւ դուշակեց»։

Ապա նրան հարցրեց, թէ կըկամենա՞ր իր կինը լինել, աւելացնելով որ չէր թողնիլ նրան, մինչև հաւանութիւն չստանար։ Երիտասարդը խոնարհուեց և ասաց՝

«Ազնիւ կայսր, թող քո կամքը լինի. ես քեզ խընդրում եմ միայն, որ գրես մի թղթի վրայ քո սեպհական ձեռքով, որ եթէ մի օր դու չարանաս ինձ վրայ և կամենաս ինձ հեռացնել քեզանից և դուրս անել ինձ քո ապարանքից, ես իրաւունք ունենամ տանել ինձ հետ ինչ որ աւելի կրսիրեմ»։

Կայսրը համաձայնեց, և տուաւ նրան մի գրութիւն կնքուած կնքամոմով և դրոշմուած կայսերական կնքով։

Մի քանի ժամանակից յետոյ պատահեց իրօք, որ կայսրն այնպէս չարացաւ իր կնոջ վրայ, որ նրան ասաց՝

«Ես էլ չեմ ուզում որ իմ կինս լինիս. թող այս ապարանքը և դնա ուր կըկամենաս»

«Բաջանուն կայսր, ես քեզ կըհնազանդիմ. թոյլ տուր միայն դարձեալ մի գիշեր անցկացնել. վաղը ես կըգնամ», խնդրեց կայսրուհին։

Կայսրը զիջաւ նրա խնդրքին, և կայսերուհին, ընթրիքից առաջ, զինու մէջ խառնեց օղի և հոտաւէտ բոյսեր. յետոյ նա խնդրեց կայսրին խմել նրան ասելով՝

«Խմիր, կայսր, և ուրախ եղիր. վաղը մենք միմեանցից կրհեռանանք, և, հաւատացիր ինձ, որ ես աւելի զուարթ կրլինիմ քան թէ այն օրը, երբ ամուսնացայ»:

Կայսրը խմելը վերջացրեց թէ չէ, իսկոյն քնեցաւ. այն ժամանակ կայսերուհին նրան դնել տուաւ մի կառքի մէջ, որ պատրաստ պահել էին, և նրան տարաւ դրբաւ մի քարայրի մէջ: Երբ կայսրը զարթեցաւ, և տեսաւ թէ որտեղ էր գտնվում, բացագանչեց՝

«Ո՞վ է ինձ բերել այստեղ»:

Կայսրուհին պատասխանեց՝

«Ես եմ քեզ բերել այստեղ»:

«Ինչո՞ւ ես այսպէս բան արել: Չեմ ասել քեզ, որ դու էլ իմ կինս չես»:

Այն ժամանակ նա մեկնեց թուղթը ասելով՝

«Ուղիղ է, որ դու ասել ես այդ, բայց տեսնում ես ինչ ես շնորհել ինձ այս թղթով. քեզ թողնելով, ես իրաւունք ունիմ տանելու ինձ հետ ինչ որ ես աւելի սիրում եմ քո ապարանքի մէջ»:

Երբ կայսրը լսեց այս խօսքերը, համբուրեց նրան, և գնաց նրա հետ իր ապարանքը, նրանից այլ ևս չհեռանալու մտքով:

Թարգ. ֆրանս. ՍԱԹԻՆԻԿ ՇԽԵԱՆՑ

ԵՐԵՔ ՎԱՐԴ

(Նմանողութիւն)

Մ փոքրիկ պարտիզում
Մի թուփ կայ վարդենի.
Տերևոց արանքում
Նա երեք վարդ ունի։

Շեն փայլում ու բուրում
Նոքա միատեսակ—
Մէկը հոտ չէ փչում,
Որ դեռ կոկոն է փակ։

Միւսն սքանչելի
Բացուած վառ դէմքով
Միշտ ինձ կեանք է տալի
Իւր անոյշ բուրմունքով։

Վերջինը թառամած
Կորցրել է ոսկէ դար
Ու սաստիկ թալկացած
Մօտենում է անկման։

Այն դեռ փակ չը բացուած
Կոկոն վարդի նման
Են անհոգ ու ազատ
Մեր օրեր մանկութեան։

Իսկ բացուած, պճնուած վարդ
Հոտաւէտ ու փայլուն—
Է կեանքի միակ զարդ
Երիտասարդութիւն։

Բայց թոռմած, թալկացած
Մենք վարդին ենք նման,
Երբ մարմնով ծերացած,
Մտնում ենք գերեզման։

ԿՕՆՕ

ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

(Հայոց Պատմութիւնից)

ՀՐԱՒԷՐ ԵՒ ՄԵՐԺՈՒՄՆ

Գ.

Գրվշնասպին միշտ վրդովում էին Հայերից Հալածուիլը և Դուինում թողած իր ծառաների կալանաւորելը. դայրոյթը դողացնում էր նրան գլխին ու ցերեկ։ Վառուած կրակի վրայ իւղ էին ածում ուրացեալ նախարարները, որոնք հաւատացնում էին պարսիկ զօրավարին, թէ Վահանին տապալելը շատ հեշտ է, որովհետև նա աննշան զօրք ունի և թէ Հայերի յոյսը վրացիների վրայ է, որոնք չէին կարող իսկոյն օգնութեան հասնել։ Աղրվշնասպ միրտ առաւ և այդ ուրացեալների հետ մի արշաւանք գործեց դէպի Հայաստան։

Հայոց կաթողիկոսը կրկին էլի ժողովեց ուխտապահ իշխաններին և ազգու քարոզով յորդորեց քաջ լինել և թշնամու մեծ բազմութիւնից չվախենալ. «Դուք կռվում էք եկեղեցու փառքի համար, ասաց յուզուած Մանդակունին,—դուք սուր էք հանում անիրաւութեան, բռնութեան դէմ. ապա ուրեմն դուք Քրիստոսի զինուորներն էք։ Մենակ էք, այո, գիտեմ, սակաւաթիւ՝ հպարտ թշնամու առաջ. բայց դրանով չլինի թէ վհատուիք։ Դուք ունիք մի մեծ դաշնակից, որ երբէք չի թողնիլ ձեզ։ Դա

եկեղեցին է, որ իր բոլոր մանուկների բերանով յաղթութիւն կրկնդրէ յաղթողների Յաղթողից»։

Որոշուեցաւ, որ Սահակ մարզպանը և Վահան սպարապետը մնան Դուին, իսկ միւսները զօրքերը տանեն պարսից դէմ։ Բարդէնը անուանուեցաւ Սիւնեաց տէր՝ ուրացեալ Գդիհոնի տեղ, մի և նոյն ժամանակ զօրավար։ Նրան ընկերակցում էին սպարապետի եղբայրը՝ Վասակ, Ներսէհ և Հրահատ Կամսարականները։

Աղրվշնասպը և ուրացեալները կրկին ամօթերես մընացին։ Մասեացոտն դաւառի Ակուռի գիւղի մօտ տեղի ունեցաւ ճակատամարտը. Հայերի կողմից պատերազմի ժամանակ թշնամու կողմն անցաւ Գարջոյլ Մաղխազունին Հարիւր մարդկանց հետ. բայց մնացեալ երեք Հարիւր Հայերը դարձեալ յաղթող Հանդիսացան։ Աղրվշնասպ դէնակոր փախուստ տուաւ դէպի Պարսկաստան, տանելով իր հետ ուրացեալներին։

Դուինի կաթողիկոսը եկեղեցական երդեցողութիւններով տօնեց այս զարմանալի յաղթութիւնը. Վահան և Սահակ ուրախ էին։ Եւ որովհետև ձմեռը վրայ էր հասնում, սկսեցին դարնան պատերազմի պատրաստուել։ Նախ և առաջ մարդ ուղարկեցին Վրաց Վախթանգ թագաւորի մօտ և նրա խոստացած օգնութիւնը խնդրեցին։ Վախթանգը խաբէութիւններով մի քանի ժամանակ Հայերին պահելուց յետոյ, երեք Հարիւր որիկայ հոներ ուղարկեց Հայաստան, որոնք սակայն շուտով էլի յետ դառան նրա հրամանով։

Դրսից օգնութիւն չկար։ Վահան սպարապետը տրխրութեամբ տեսնում էր, որ ի վերջոյ ինքը մենակ պիտի մնար. արդէն սուաջին խորհրդից յետոյ քանիսները դաւաճանել էին ուխտին։ Գործը քայքայվում էր դեռ չկրսուած։ Կարելի էր չհաւատալ և ամենահարազատ զօրականին. զարմանալի չէր լինիլ, եթէ յանկարծ դաւաճանէր

և այնպիսին, որի վրայ ամենից շատ հաւատ ունէր Վահանը։ «Ահա ինչպէս սպասկանել է պարսկական ոգին մերոնց սիրտը», մտածում էր Վահանը երկար ժամանակ, իսկ մի քանի հարցեր շատ անհանգստացնում էին նրան։ Ինչո՞վ էր հրապուրելի Վահանի կողմը. նա ոչ պարգև ունէր տալու, ոչ պատերազմական ճոխ աւարի խոստումն։ Այն ինչ արեաց Պերոզ արքայն կարող էր ամենքին խելքից հանել հարուստ ընծաներով։ Մի՞թէ ինքը Վահանը մի ժամանակ չէ՞ր շլացել այդ պարգևների փայլով։ Որքան շատ էր մտածում նա այդ տխուր հանգամանքների վրայ, այնքան աւելի շատ էր համոզվում որ պէտք է զգուշութեամբ գործել։

Յանկարծ նա յիշեց մի միջոց, որ վերջինն էր։ Պէտք էր և այդ միջոցը փորձել։ Ուստի մի ձմեռնային ցուրտ երեկոյ գնաց կաթողիկոսի մօտ, յայտնեց նրան երկրի և իրերի դրութիւնը և դառնապէս դանդատուեց Հայերի անմիաբանութեան վրայ։

Վեհափառ ծերունին առանձնացած շարադրում էր իր գեղեցիկ երգերը։ Սպարապետի խօսքերը տխրացրին նրան։ Այո, իրողութիւնը այդպէս էր, նա համաձայն էր։ Բայց և այժմ չկորցնելով իր ոգեկան կորովը, նա հայրաբար խրատեց սպարապետին արի և եռանդուն մնալ, իմանալով որ իր կողմն է Աստուած, որի համար հնարաւոր է և երեք հարիւրով մի քանի հազարներից բաղկացած բանակը ցիր ու ցան անել, ինչպէս այդ եղաւ Ակուռիի մօտ։ Ի վերջոյ հայրապետը խորհուրդ տուաւ Վահանին դառնալ նախարարական զօրեղ ցեղերին, որպիսիքն էին Արծրունիք, Անձևացիք, Ռշտունիք և Մոգացիք։ Մամիկոնեանի միտքն էլ հէնց այդ էր։ Բայց որովհետև այդ նախարարներից շատերը այնքան զուռզ էին, որ արհամարհում էին նորընտիր սպարապետին լոկ այն պատճառով, որ նա դեռ ջահիլ էր և ծաղումով ոչ այն-

քանի՞ նշանաւոր, ուստի կաթողիկոսը համաձայնեցաւ Սահակ Բագրատունու հետ կատարել այդ միտքը։ Իսկոյն ներս հրաւիրուեցաւ վեհարանի աւագ եպիսկոպոս Թաթուլը և կաթողիկոսի հրամանով սկսեց հրաւիրագրեր պատրաստել Հայոց աշխարհի զանազան կողմերի պետերին։

Թղթերը կրում էին կաթողիկոսի և մարզպանի ստորագրութիւնները և այսպիսի բովանդակութիւն ունէին.

«Գործը, որի մասին դուք հրաւիրվում էք, ոչ անապարծութեան անունով սկսուած, ոչ էլ մի բռնակալական և աշխարհակալական նպատակ ունի։ Ձեզանից շատերը Պարսից արքունիքի վախից ակամայ ընդունել են մոխրապաշտութիւնը և այդպիսով քայքայելով մեր երկրի ոյժերը, ազատ կարողութիւն են տուել պարսիկներին բռնանալ մեր եկեղեցու վրայ, որի պաշտպանութեան համար, լաւ յիշեցէք, մի երեսուն տարի սրանից առաջ մեր Հայրերը և եղբայրները սարսափելի մարտ մղելով, սուր ի ձեռին նահատակուեցան ճշմարիտ հաւատով։

«Պարսկական բռնութիւնը վերջին ճիգն է թափում մոգութիւնը Հայաստանում հաստատելու համար։ Եւ արդէն, ինչպէս լսել էք, նախարարներից մի քանիսը միացել են այդ ծանր բռնակալութեան դէմ։ Աստուած, որ Գեղէոնի ձեռքով պատուհասեց ամբարիշտ հեթանոսներին, որ իր սիրած Իսրայէլին չթողեց եգիպտական անարգ ծառայութեան մէջ և որ ջրերի տակ խեղդեց ամբարտաւան Փարաւոնին, որ յանդգնել էր ծաղրել Նրա զօրութիւնը, նոյն Աստուածը այսօր էլ կենդանի է և մեզ հովանաւոր։ Այդ պարզ ցոյց տուեց նրանով, որ աշխարհի առաջ իր սակաւաթիւ ծառաներին շնորհեց մի այնպիսի յաղթութիւն, որի վրայ զարմացած մնաց նոյն ինքն խաչի թշնամին։ Ապա ուրեմն շտապեցէք մասնակից դառնալ այս սուրբ գործին, ընդունել Քրիստոսի անանց փառքի պսակը։

«Արդարև դուք լաւ գիտէք մեր սուրբ օրէնքը և ձեզ ուսուցանելու միտք չունինք մենք։ Ուրեմն էլ ինչի՞ ենք ասասում. եկէք ժողովուենք եկեղեցու թշնամու դէմ, յաղթենք, եթէ մեզ վիճակուած է յաղթել և ապրելով տեսնենք թշնամու կորուստը, իսկ եթէ մահը անխուսափելի է, մեռնենք ապագայ կեանքում հրճուելու համար։

«Գործի մանրամասնութիւնները կը պատմէ ձեզ կաթողիկոսական նուիրակ Գարեգին եպիսկոպոսը, որ այս թուղթը հանդերձ հայրապետական օրհնութեամբ պաշտօն ունի յանձնել ձեզ»։

Գարունը նոր բացուել էր, երկիրը հետզհետէ դէն էր գցում իր սպիտակ վերարկուն։ Տաք հովը երկրագործ հային դաշտն էր կանչում, իսկ խաշնարածին ցոյց էր տալիս մարդերի և ղետափների նորաբողբոջ դալարենիքը։ Այդ ժամանակները միայն Գարեգին եպիսկոպոսը իր յանձնարարականը վերջացրած, տրտում տխուր Դուին էր դիմում։ Նա շտապում էր պատմել զառամեալ հայրապետին թէ ինչ սառն ընդունելութիւն գտաւ առաջնակարգ նախարարութիւնների կողմից։

«Ո՛չ, իզուր յոյս է. ոչինչ չի կարելի անել։ Մեր առաջնորդող մարդկանց գոռոզութիւնն ու անմիաբանութիւնը վերջին պատիժը պիտի հասցնէ մեր խեղճ հայրենիքին», ասում էր Վահանը ինքն իրան, եպիսկոպոսի վերադարձից յետոյ։

Եւ նրա զայրոյթը այնքան էր, որ նա ուզում էր լաց լինել։

Ջատկից մի շաբաթ էր անցել։ Մի մարդ իր ձիու կողերը անդադար փշրելով արդէն հաս ու հաս էր Դուինի դռներին։ Երևում էր որ նա սուրհանդակ էր և շտապում էր ժամանակից մի ժամ առաջ տեղ հասցնել իր

հետ բերած կարևոր լուրը։ Տեսնելով սակայն, որ ուժասպառ կենդանին այլ ևս շարժուելու կարողութիւն չունի, նա թուաւ իջաւ դետին, սանձը գցեց ձիու գլխով, մի քանի խօսք ասաց իր մօտով անցնող մի Հային և ինքը ոտաստարանօք դիմեց դէպի քաղաք։ Ետևում նա հասաւ կաթողիկոսարանը։

Դա մի անձևացի զինուոր էր, որ պատմեց թէ ինչպէս իր տէրը, Յովհան Անձևացին և Ներսէհ Երուանդունին իրանց մարդկերանցով գալիս էին Վահանի խմբի հետ խառնուելու, բայց Առեստ գիւղաքաղաքի մօտ նրանց ընդառաջ ելան Անձևացեաց տէրը Սևուկ և Մոկաց իշխան Յովհանը, որոնք գայրացել էին, թէ ինչու նրանք գնում էին սպարապետի օգնութեան, երբ իրանք բացէ ի բաց մերժել էին կաթողիկոսի հրաւէրը։ «Առեստի մօտ ճակատ ճակատի կանգնեցին եկու հայ զօրքերը, պատմեց սուրհանդակը. «մեր կողմից շատերը մարտի անպատրաստ էին, բայց և այնպէս Աստուծոյ անունը տալով սաստկաբար յարձակուեցանք, ջարդեցինք ընդդիմադրեցինք։ Երուանդունին և իմ տէրը կռվում էին Յովհան Մոկացու հետ։ Մենք անհամբեր սպասում էինք թէ ինչ վերջ կունենայ դրանց կռիւը։ Մոկացուն մենք շատ էինք ատում, որովհետև նա ծաղրել էր մեր տիրոջը, ասելով թէ Յովհան Անձևացին ոչ մի բանի պէտքական չէ, պէտք է նրա վիզը մի օղակ գցել և կովի պէս կապել։ Նրանց կռիւը երկար չտևեց. իմ տէրը և Ներսէհ իշխանը շրջապատեցին նրան ետևից և առջևից և ես ինքս տեսայ թէ ինչպէս մեր իշխանը սրի ոյժգին հարուածով երկիր կործանեց նրան։ Զօրքը փախստական դարձան և մենք հետապնդեցինք ու շատերին կոտորեցինք։ Իշխանը հրամայեց ինձ փութալ պատմել սպարապետին այդ ամենը, յայտնել որ իրանք երկու օրից այստեղ կլինին և որ զգուշութեան միջոցներ ձեռք առնեն Հայոց զօրքերը։ Յաղթուած նա-

խարարները հղօրներից են և երևի վրէժխնդրութիւնը շուտով զէնք բարձրացնել կը հարկադրէ յաղթուածի և սպանուածի ազգականներին։ Բացի այդ՝ ամենից լաւ կը լինէր, եթէ սպարապետը մեզ օգնելու համար պատրաստի այրուձի ունենար. մեր դնդերը այնքան սակաւաթիւ են, որ կարող են ամեն ժամանակ վտանգի ենթարկուիլ»։

Սուրհանդակի հաղորդած լուրը շուտով իմացաւ բոլոր քաղաքը. մեծամասնութիւնը ուրախանում էր, որ Աստուծու օգնութիւնը ուխտապահների կողմն էր։ Իսկ կաթողիկոսը աւելի ևս վշտացաւ այդ լուրը առնելուց յետոյ։ Երկու հարազատ ազգակիցներ արիւն են թափում. և ինչի համար։ Այդպիսով կարող էր ներքին ընտանի խռովութիւն ծագել, որ աւելի ևս ոյժ կը տար արտաքին թշնամուն։ Ծանր էր այդ, շատ ծանր։ Հայրապետը երկար մտածում էր դառնացած սրտով։ Ի՞նչ պիտի անէր Վահանը մի սակաւաթիւ խմբի հետ, և նոյն ժամանակ, երբ նրանից օգնութիւն են պահանջում, Պարսկաստանից վատ լուրեր էին հասնում։ Պերոզը կատաղած էր Վահանի վրայ և պատրաստվում էր պատժել նրան։ Շուտով ուրեմն պարսիկ զինուորները կողողեն Հայաստանը, ով կը դիմադրէ նրանց։

Եւ կաթողիկոսին շատ էր տանջում այդ հարցը։ Նա նայում էր իր շուրջը. ամեն տեղ անտարբերութիւն, սառնութիւն էր տեսնում, մինչև իսկ անհաշտ թշնամութիւն։

Բայց վիրաւորը ծերունին չյուսահատուեց. նայեց իր վրայ, յիշեց իր սիրելի քաջերին։ Նա վճռեց գործել . . . Եւ իր սպասաւորին Վահանի ետևից ղրկեց։

Ա. ԲԱԲԱԽԱՆԵԱՆ

(Կը շարունակուի)

ՄՕՐ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՎՐԱՅ

Նո՜ւշ մայրիկ, ո՞ւր հեռացար և ինձ անտէր թողեցիր.
Քեզնից յետոյ դեռ իմ ականջ չէ լսել խօսք քաղցրալիր։

Ինձ ամենքը հալածում են, թքում, մրում, անարգում.
«Մայրի՜կ, մայրի՜կ»—մրմնջում եմ, բայց ո՞ւր... դու ինձ չէս լսում...

Ում պարզում եմ դողդողջ ձեռքս. «Կորի՛ր» գոռում է վրէս.
Ոչմնից հաց կամ շոր եմ խնդրում, կոչում է ինձ՝ «անիրես»։

Չունիմ խղճուկս ապաստան, չունիմ գէթ չոր անկողին,
Փողոցներն են իմ կացարան, անկողինս՝ թաց գետին...

Ա՜խ, մայրիկ ջան, իմ կեանք, արև, ինչու շուտով խաւրեցիր
Եւ ինձ անտէր, որբ, անսպաշտպան, այլոց դռան թողեցիր։

Քարասիրտ է այս աշխարհը—քարասի՛րտ, անկարեկի՛ց,
Նրան չի՛ շարժում ոչ լաց, կական, ոչ որբի ձայն վշտալից։

Նա ատում է, արհամարհում հայ մուրացող աղքատին,
Հալածում է մինչ վերջին շունչ և աղքատի պաշտպանին...

Ծանր է, մայրիկ, որբ, անճարին կեանք վարել այս աշխարհում,
Ուր թշուառի դառն արցունքը մարդկանց ծիծաղն է շարժում . . .

ԱՂԷՔ. ԾԱՏՈՒՐԵԱՆ

Նիժնի-Նովգորոդ.

ՌՈԲԻՆԶՕՆ

1.

Համբուրգ քաղաքում ապրում էր մի հարուստ վաճառական. սա ունէր երեք որդի: Ամենամեծ որդին դինուոր դարձաւ և Ֆրանսիացիք սպանեցին նրան պատերազմում: Միւս որդին գնաց ուսում առնելու, Հիւանդացաւ մեռաւ: Կենդանի մնաց միայն փոքր որդին. անունն էր Ռոբինզոն: Հայրն ու մայրը շատ սիրում էին նրան և երես էին տալիս: Ռոբինզոնը չէր ուզում սովորել. ծնողներն էլ չէին ստիպում, և նա ինչ ուզէր՝ անում էր:

Փոքրիկ Ռոբինզոնը մեծացաւ. հայրն ու մայրը չգիտէին, թէ ինչ գործի դնեն նրան: Հայրը կամենում էր, որ նա վաճառական դառնայ. իսկ Ռոբինզոնն ասում էր. «Չեմ ուզում վաճառական դառնալ. ուզում եմ հեռու տեղեր գնալ, օտար աշխարհներ տեսնել»:

Հայրը չէր յօժարում և ասում էր որդուն. «Դեռ ինչ խելք ունես, որ կարողանաս ճանապարհորդել»: Իսկ մայրն ասում էր. «Սիրելի որդեակ, օտար երկիրներ որ գնաս, ո՞վ կընայի քեզ այնտեղ. միթէ չեմ մեղքանում հօրդ ու մօրդ, որ կամենում ես հեռանալ մեզնից»:

Մի օր Ռոբինզոնը գնաց ծովափը մանդալու և տեսաւ այնտեղ իր բարեկամներից մէկին: Բարեկամը մի նաւապետի որդի էր և պատրաստվում էր իր հօր հետ Լոնդոն գնալու: Եւ նա ասաց Ռոբինզոնին. «Ուզո՞ւմ ես, եկ միասին Լոնդոն գնանք»: Իսկ այնտեղ հասնելու համար պէտք էր անցնել մի մեծ ծովից, որ գերմանական ծով է կոչվում: Ռոբինզոնն ասաց. «Շատ կուզէի գալ, բայց հայրս ու մայրս չեն թողնիլ»: Բարեկամն ասաց. «Ի՞նչ ես վախենում. մենք շուտով կվերադառնանք և յետոյ կըպատմես ծնողներիդ, թէ ուր էիր և ինչեր տեսար»: Ռոբինզոնն ասաց. «Ի՞նչպէս գնամ, որ փող չունիմ»: Բարեկամն ասաց. «Միամիտ եղիր. ես քեզ իմ գրպանից կըտամ»:

Ռոբինզոնը մտածեց, մտածեց և ասաց. «Դէ լաւ— գնանք»։

Միւս օր Ռոբինզոնը վաղ վեր կացաւ, շորերը հագաւ, նաւ նստեց, և նրանք գնացին։ Իսկ ընկերը մարդ ղրկեց, որ գնայ Ռոբինզոնի հօրն ու մօրն ասէ, թէ նրանց որդին և ինքը Լոնդոն են գնացել երեք շաբաթով։ Երբ նրանք բոլորովին հեռացան ափերից, նաւապետը հրամայեց վեց անգամ թնդանոթ արձակել. և Ռոբինզոնը շատ ուրախացաւ, որ ճանապարհ էր ընկել։ Օրը գեղեցիկ էր. ուղևորները զուարթ-զուարթ յաւաջ էին նաւում։ Միւս օրը մի մեծ լայնատարած ծովի մէջ մտան։ Ռոբինզոնը զարմանում էր, որ իր շուրջը ծովից և երկնքից զատ՝ ոչինչ չէր տեսնում։

Երրորդ օրը մի սաստիկ քամի փչեց, երկինքը որոտաց, փոթորիկ բարձրացաւ. սև սև ամպերից գետի պէս անձրև տեղաց. նաւաստիները վախենալով բռնում էին ձեռքի տակ պատահող բաներից, որ ծովը չընկնին, և կարծում էին թէ նաւը ջրի տակ կերթայ։ Ռոբինզոնն էլ վախեցաւ. սիրտը յետ եկաւ,—կարծեց թէ խոսոյն կըմեռնի։ Նա սկսեց լաց լինել և ասում էր. «Սիրելի ծնողներ, էլ չէք տեսնիլ ինձ. ինչու թողեցի ձեզ»։

Իսկ քամին գնալով կատաղում էր. նաւի ստաղաստները պատռտուել էին և նա չէր կարանում յառաջ գընալ. տակն էլ ծակուել էր և ջուրը ներս էր վազում։ «Ահա կորանք», կանչեցին ամենքը։ Ռոբինզոնն այս աղաղակը լսեց թէ չէ, մեռելի պէս վայր ընկաւ։ Ամենքը սկսեցին նաւի միջից ջուրը դուրս քաշել, որ չընկղմի։ Նաւաստներից մէկն էլ ասաց Ռոբինզոնին. «Ի՞նչ ես պառկել. չե՞ս տեսնում, որ բոլորս գործի վրայ ենք. մենք ջուրը քաշելով շան պէս յոգնեցանք, իսկ դու պառկել ես»։

Ռոբինզոնը հազիւ հազ վերկացաւ և սկսեց ջուր կրել։ Այն միջոցին նաւապետը հրամայեց թնդանոթ արձակել—մտածում էր թէ գուցէ ուրիշ նաւեր կըլինին մօտերքում, կըլսեն կ՝օգնեն։ Իսկ Ռոբինզոնը թնդանոթի բոմբիւնը որ լսեց, կարծեց թէ նաւը խորտակուել է, և նրից վայր ընկաւ շնչասպառ։

Բայց ինչքան էլ ջուրը դուրս էին քաշում, այնքան էլ շատանում էր։ Ամենքն էլ կարծում էին, թէ նաւը կը

խեղդուի, և նրան թեթևութիւն տալու համար՝ բոլոր թենդանօթները, տակառները, ուտելու պաշարները ծովը ձգեցին։

Այս նաւից փոքր ինչ հեռու մի ուրիշ նաւ էր անցնում. երբ նրա վրայ եղած մարդիկը թենդանօթի որոտմունքը լսեցին, նրանց նաւապետը մի մեծ մակոյկ արձակեց։ Մակոյկը չէր կարում Ռոբինզոնի նստած նաւին մօտենալ։ Հաղիւ հազ կարողացան սրա վրայից մի պարան ձգել եկող մարդիկներին. սրանք խոկոյն պարանի ծայրից բռնեցին. նաւի մարդիկն էլ պարանից քաշելով, իրանց մօտեցրին մակոյկը։ Այն ժամանակ ամենքն սկսեցին մակոյկի մէջ թռչկոտել. Ռոբինզոնին էլ մէջը դրեցին, որովհետև ոչինչ չէր զգում և մեռելի պէս բան էր դարձել։ Մակոյկը նաւի մօտ տարաւ նրանց, և բոլորքեան մահից փրկուելով, ուրախացան։

Լոնդոն որ հասան, Ռոբինզոնը կամեցաւ տեսնել, թէ ինչ քաղաք էր, և կէսօրին գնաց ճաշելու իրան բերող նաւապետի մօտ։

Ճաշի ժամանակ նաւապետն ասաց Ռոբինզոնին. «ինչ բանի համար ես Լոնդոն եկել—արդեօք գործ ունիս, թէ հայրդ է դրկել»։

Ռոբինզոնն ասաց. «Գործ չունիմ այստեղ. հօրից թաքուն եմ հեռացել»։

Նաւապետը բարկացաւ Ռոբինզոնի վրայ և ասաց. «Ռոբինզոն, լաւ չես արել որ հօրիցդ փախել ես։ Վերադարձիր Համբուրգ և դնա հօրիցդ ներողութիւն խնդրիր»։ Եւ փող տուաւ Ռոբինզոնին։

Ռոբինզոնը նաւահանգիստ գնաց և սկսեց մտածել, թէ «Հօրս աչքին ինչպէս երևամ։» Այս տեղ նրան մի մարդ պատահեցաւ։ Ռոբինզոնը նրան հարցրեց. «Կարելի՞ է արդեօք Համբուրգ գնացող մի նաւ ճարել»։ Մարդն ասաց. «Ա՜յ, Համբուրգ գնացող նաւ չրկայ»։ Եւ այդ մարդը մի նաւատէր էր և շուտով Գ վ ի ն է ա պիտի երթար։ Գվինէան Աֆրիկայումն է։

Ռոբիզոնն ասաց նրան, «Իսկ դու ո՞ւր ես գնում»։ Նաւատէրն ասաց. «Հեռու տեղ եմ գնում—Աֆրիկա. այն տեղ մի երկիր կայ, անունն է Գվինէա, և մէջը սև-սև մարդիկ են բնակվում»։ Ռոբինզոնն ասաց. «Այդ երկիրը

հեռու է»։ Նաւատէրն ասաց։ «Հեռու է. ուզում ես միասին գնանք»։ Ռոբինզոնն ասաց. «Ես փող չունիմ«։ Նաւատէրն ասաց. «Ես իմ գրպանից կրտամ քեզ. իսկ դու կացիններ, դանակներ, զոյն զոյն ապակիներ կրգնես»։ Ռոբինզոնն ասաց. «Ինչացու են այդ բոլոր բաները. դրանք ինձ հարկաւոր չեն»։ Նաւատէրն ասաց, «Դնիր, սև մարդիկն այդ բաներից ոչինչ չեն հասկանում և դրանց փոխարէն շատ ոսկի և փղոսկր կրտան քեզ»։ Ռոբինզոնն ասաց. «Փղոսկրն ինչիս է պէտք»։ Նաւատէրն ասաց. «Փղոսկրն ոսկիտակ է և շատ փող կ՚արժէ»։ Եւ Ռոբինզոնն ասաց. «Լաւ, երթանք»։

Նրանք նաւ նստեցին և գնացին։ Երկար նաւեցին տեսան մի երկիր։ Ռոբինզոնը հարցրեց. «Այդ ինչ երկիր է»։ Նաւատէրն ասաց. «Դա Մադէրա կղզին է. մէջը լաւ գինի են պատրաստում, շատ էլ կանարեան թռչուններ կան, որոնք շատ սիրուն երգում են»։ Ռոբինզոնն ասաց. «Այդ կղզին կերթանք թէ չէ»։ Նաւատէրն ասաց. «Կ՚երթանք, որովհետև այնտեղ նաւս նորոգելու եմ»։

Նաւի բոլոր մարդիկը ցամաք իջան և Ռոբինզոնը կրդզու վրայ մանդալու գնաց։ Այնտեղ շատ խաղող կար. Ռոբինզոնն այնքան կերաւ, որ հազիւ հազ յետ եկաւ։ Նաւատէրը նրան ասաց. «Ռոբինզոն, այժմ դու գնա, ինչքան կուզես ման եկ - ես նաւս պիտի նորոգեմ»։

Ռոբինզոնն այնտեղ երեք օր մնաց և ձանձրացաւ։ Երրորդ օրը ծովափ գնաց, սկսաւ յառաջ նայել և մի նաւ նկատեց, որ ուղիղ դէպի կղզին էր գալիս։ Նաւը որ հասաւ, Ռոբինզոնը նաւապետին հարցրեց, թէ «Ո՞ր էք գրնում»։ Նաւապետն ասաց. «Մենք նաւում ենք Բրազիլիա»։ Ռոբինզոնն ասաց. «Բրազիլիան ինչ բան է»։ Նաւապետն ասաց. «Դա մի հեռաւոր երկիր է և գտնվում է Ամերիկայում։ Այնտեղ վայրենի մարդիկ են բնակվում և այն երկիրը ոսկի աւազով ու պատուական քարերով առատ է»։ Ռոբինզոնն ասաց. «Արի ինձ էլ հետդ առ»։ Նաւապետն ասաց. «Ինչու չէ—եկ գնանք»։ Եւ գնացին։

Մի քանի օր նրանք յաջող նաւեցին. յետոյ փոթորիկ բարձրացաւ։ Այս փոթորիկը վեց օր տևեց, և նաւապետը չգիտէր, թէ նաւն ուր էր ընկել։

Մի օր յանկարծ ամենքը կանչեցին. «Երկիր, երկիր,

երկիր է երևում»։ Հէնց որ այս ասացին, նաւը յանկարծ քարի դիպաւ, տակը ճեղքուեցաւ և ջուրը ներս վազեց։ Բոլորն էլ սկսեցին լաց լինել, կանչվրտել, պատէ պատ ընկնել—չգիտէին, ինչ անեն։ Յետոյ մի մեծ մակոյկ իջեցրին, մէջը նստեցին և դէպի եկերքը վարեցին։ Իսկ ջուրն անդադար մակոյկի վրայ էր թափվում։ Վերջապէս վրայ հասաւ մի մեծ ալիք և շուռ տուաւ մակոյկը։ Մինչի բոլոր մարդիկը ջուրն ընկան, ճիկ հանելու ժամանակ էլ չունեցան։

2.

Ամենքը խեղդուեցան. միայն Ռոբինզոնին ալիքները ափի վրայ ձգեցին։ Երկար ժամանակ նա մեռելի պէս պառկած էր. երբ աչքերը բաց արաւ, տեսաւ, որ մենակ էր. բոլորը խեղդուել էին, նաւն էլ ընկղմել էր։ Զատ ցաւեցաւ, որ ընկերները խեղդուել էին, և լաց եղաւ։ Յետոյ աղօթք արաւ Աստուծոյ և գնաց տեսնելու, թէ այն ինչ երկիր էր, ուր որ ընկել էր։ Ման եկաւ դէս ու դէն, տեսաւ որ այնտեղ ոչ հայ էր բուսնում, ոչ էլ տներ կային, և վախ ընկաւ սրտի մէջ։ Նստեց և մտածեց. «Այժմ ես սովից կըմեռնեմ կամ թէ վայրենի գազաններն ինձ կուտեն»,—և նորից լաց եղաւ։ Յետոյ քունը տարաւ. վախենում էր գետնի վրայ պառկել, որ գազաններն իրան չուտեն. մի ծառի վրայ ելաւ, ճիւղերից բռնեց և այսպէս քուն եղաւ։

Եւ երազ տեսաւ, իբր թէ տանն է, հայրն ու մայրը լաց են լինում և վշտից բոլորովին մաշուել են. ինքն էլ լաց եղաւ ու կանչեց. «Ես այստեղ եմ...»։ Հէնց որ կանչեց, քնած տեղը շուռ եկաւ և վայր գլորուեցաւ։ Ծառը բարձր չէր, տակին փափուկ խոտ կար բուսած և Ռոբինզոնը շատ ցաւ չզգաց։

Լուսադէմին ծառից վայր իջաւ. շատ անօթի էր. արդէն երկու օր էր՝ ոչինչ կերած չէր։ Սկսաւ լաց լինել, գետնի վրայ ընկաւ և ասաց. «Ինչո՞ւ ես էլ չխեղդուեցայ. հօ բոլորը մէկ է—սովից պիտի մեռնեմ»։ Գլուխը վերցրեց, մի բազէ տեսաւ՝ բերանում ձուկ բռնած, և ասաց. «Ինչո՞ւ եմ արտասուք թափում. Աստուած թռչնին կերակրում

է, ինձ էլ ուտելու բան կըտայ», և սիրտը թեթևացաւ։

Ծովափ գնաց. այնտեղ շատ խղունջներ կային. մէկը քարով կոտրեց, համը տեսաւ—վատ չէր, և այնքան կերաւ, որ կշտացաւ։ Կշտանալուց յետոյ գնաց ման դալու և մի պարզ վտակ տեսաւ—խմեց ջրից և Աստուծուց շնորհակալ եղաւ սովամահ չլինելու համար։

Երբ գիշերը վրայ հասաւ, նորից վախ զգաց, սկսեց նորից լաց լինել և մտածեց. «Բոլորը մէկ է, սովից չմեռայ. այժմ վայրենի մարդիկը կըգան ինձ կըսպանեն»։ Այսպէս մտածելով ծառի վրայ բարձրացաւ, կապեց ինքն իրան մի հաստ ճիւղից և քուն եղաւ։

Առաւօտեան վեր կացաւ, ծառից մի մեծ դաւազան կոտրեց և ելաւ մի բարձր բլրի վրայ, որ տեսնէ, թէ ինչ մարդիկ կամ ինչ գիւղեր կային այնտեղ։ Բլուրը ժայռոտ էր. Ռոբինզօնն հազիւ կարաց դէպի վեր բարձրանալ։ Չորս կողմ որ նայեցաւ, տեսաւ որ ինքը մի կղզու վրայ էր, շուրջն էլ ծով։ Կղզին մեծ էր, բայց վրան ոչ գիւղ կար, ոչ քաղաք. միայն լեռներ, անտառներ և դաշտեր էին երևում—ուրիշ ոչինչ։

Եւ Ռոբինզօնը մտածեց. «Ի՞նչպէս անեմ, որ մի խրճիթ շինեմ ինձ համար»։ Ոչ կացին ունէր, ոչ սղոց։ Մըտածեց, մտածեց, տեսաւ, որ այնտեղ ուռենու նման մատղաշ ծառեր էին աճում։ Ուրախացաւ և ասաց. «Այս ծառերը կըքաղեմ, մի բակ կըշինեմ ինձ համար, և ոչ ոք չի տեսնիլ, որ այստեղ բնակող մարդ կայ»։

Երբ ծառերն արմատով դետնից հանելու վրայ էր, մի նեղ մուտքով քարայը տեսաւ լեռան տակ—դա որջի պէս մի բան էր։ Եթէ մի բահ ունենար, հէնց այնտեղ իր համար մի բնակարան կըփորէր։ Բահ չունէր. ձեռքերով սկսեց պոկոտել ճկուն ծառերն և որջի շուրջը տնկել։ Ամբողջ տարին ձմեռ չէր լինում այն կղզու վրայ և օդը միշտ տաք էր։ Ռոբինզօնն աշխատելուց յոգնեցաւ և նըստեց, որ հանգստանայ։ Յանկարծ մի ձայն հասաւ նրա ականջին. գնաց տեսնելու, թէ ինչ էր, և տեսաւ—մի կարկաջուն աղբիւր էր։ Ուրախացաւ և ասաց. «Ա՜յ լաւ բան. ջուրն ինձնից մօտիկ կըլինի»։ Բոլոր օրն անցրեց ծառերը տեղափոխելով. երեկոյեան ծառի վրայ ելաւ, գոտիով իրան ամրացրեց և քուն եղաւ։

Առաւօտեան վերկացաւ և գնաց ծովափի վրայ խղուՆՉ որոնելու։ Ուրիշ ճանապարհով գնաց և մի ահագին ծառ տեսաւ, վրան էլ դդումի նման մեծ-մեծ պտուղներ։ Պոկեց մինը. կճեպը կարծր էր։ Ռոբինզօնը քարով կոտրեց նը-բան—միջուկը փափուկ էր և համեղ, և չորս հատ կեբաւ։ Այս պտուղները կոչվում են կոկոսի կաղին, իսկ ծառը՝ կոկոսի արմաւ։ Կշտանալուց յետոյ Ռոբինզօնը ծովափ գնաց և ոստրէներ հաւաքեց։ Յետոյ բահի նման մի քար գտաւ, հետն առաւ, և այն օրից նրա աշխատանքն աւելի արագ յառաջ գնաց։

Մի օր մինչ նա ծովափ էր գնում ոստրէներ որոնելու, կանեփի նման մի բոյս տեսաւ. այս բոյսը քաղեց, ջրով թրջեց, յետոյ չորացրեց և սկսեց նրանից չուան հիւսել։ Այս չուանով մի սուր քար կապեց փայտի ծայրից, և այս կերպով մի բահ շինեց։

Այժմ նա սկսեց աւելի շուտ բանել. երկու շարք ծառեր տնկեց, ոստերով հիւսեց, մէջ տեղը հող ածեց և քարայրի շուրջը մի ամուր ցանկ պատեց։ Ծառերն ամեն օր ջրում էր, որ արմատ բռնեն և դալարին։ Ցանկի մէջ մի դուռը կտրեց, չուանից մի սանդուխք հիւսեց, սանդուխքն իր բնակարանի կտուրի վրայ գտնուող ծառից կապեց. և երբ կամենում էր ցանկի միւս կողմն անցել, այս սանդուխքով էր բարձրանում։

Յետոյ Ռոբինզօնը ծովափ գնաց և այնտեղ տապարի նման մի ծակ ունեցող քար գտաւ։ Այս քարը փայտի վրայ անցրեց, չուանով կապեց և իսկական կացնի նման մի բան շինեց. յետոյ էլի երկու հատ քար գտաւ—մինը մուրճի նման էր, միւսը՝ սեպի։ Այս բոլորը հետն առաւ, տուն տարաւ և սկսեց քարայրից քարեր հանել, որ նա աւելի մեծ և արձակ լինի։ Յետոյ շատ խոտ քաղեց, չորցրեց, քարայրի մէջ փռեց, իր համար անկողին պատրաստեց և լաւ քուն եղաւ, որովհետև մինչև այն ժամանակ միշտ ծառի վրայ էր քնել թռչունի պէս։

Փ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

(Կը շարունակուի)

ԸՆՏԱՆԵԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ

(Դիսանդէից)

Դ.

Ահա մի հետաքրքրական փորձ, որ լաւ հասկացողութիւն է տալի թէ ինչպէս է ձայնը հաղորդվում պիրկ մարմինների միջով. եթէ արծաթէ ճաշի դրդալից կապենք հաստ թելեր, որոնց երկու ծայրերը բռնենք մեր ականջներին ու թողենք որ դրդալը օրօրուի, այնպէս որ նա դիպչի սեղանի ծայրին, այն ժամանակ կախու

զորվում է մարդի խօսակցութիւնը. այդ տեսակ մի փոքրիկ փորձ կարող ենք անել հասարակ միջոցներով. վերառէք երկու պղնձէ փոքրիկ արկղիկների դլորիկ խուփերը, միացրէք դրանց 25—30 արշին երկարութիւնով մետաքսէ լարով, այն ժամանակ կարելի է խօսակցութիւնը ուղղակի լարի մի ծայրից մինչև միւսը հաղորդել. խօսողը խուփը պնում է բերանին, իսկ ունկնդիրը ականջին:

Դժուար չէ ցոյց տալ, որ ձայնը պահանջում է որոշ ժամանակամիջոց մի տեղից միւս տեղ տարածուելու համար. երբ հիւանը ուրաքով զարկում է սեղին, նկատվում է, որ ձայնը հասնում է մեր ականջին մի քանի վայրկեան—սեկունդ—յետոյ՝ ուրաքը փայտին դիպչելուց. հրացանը, մանաւանդ թնդանօթը արձակուելուց՝ մենք նախ տեսնում ենք բոցը և ծուխը, ապա թէ նոր լսում ենք բոմբիւնը կամ ձայնը:



Ձայների ասոիճանները կարելի է ցոյց տալ բաժակների վրայ, որոնց մէջ ածուած է զանազան չափով ջուր. բաւական է վերցնել այդպիսի հօթը բաժակ և վարժ ու երաժշտային նուրբ լսելիք ունեցող մարդը կարող է նրանց վրայ մինչև անգամ եղանակներ դաշնակաւորել: Հնչող բաժակները երկաթային ձայներ են հանում:

Ցնային զանազան առօրեայ դործածական իրերը հենց մեզ միջոց են տալիս ծանօթանալու ելեկտրականութեան հիմնական օրէնքների հետ: Բաւական է օրինակ զմուռի կտորը մի քիչ շփենք մահուդին, որ նա ընդունակ լինի իրան քաշելու թղթի, յարդի մանր կտորները:

Ելեքտրական կայծ յառաջ բերելու համար հետևեալ հասարակ միջոցը դործ դրէք. նկարչական թղթի մի հաստ թերթ վառարանի մօտ լաւ չորացնելուց յետոյ դրէք տախտակէ սեղանի վրայ և լաւ շփեցէք բրդէ շալով, այնքան որ կպչի համարեա սեղանին. յետոյ թերթի մէջ տեղը դնելով մի քանի բանալիներ՝ նրան ծայրերից բարձրացրէք և մատերնիդ մօտեցնելով բանալիներին՝դուրս կը գայ փայլուն ելէքտրական կայծ, վասն զի, թղթի մէջ դոյացած ելէքտրականութիւնը անցել էր մետաղների մէջ: Զոր եղանակին և եթէ թուղթը լաւ տաքացրած է, այդ կայծի երկարութիւնը կարող է հասնել մինչև $^3/_4$ դիւյմի:



Ելէքտրանօթ կամ ելէքտրօֆօր կազմելու համար, վեր առէք մի լաք քսած թէյի մատուցարան, որ դրվում է երկու բաժակի վրայ և նրա չափ մի հաստ թերթ թուղթ, որի երկու ծայրերից զմուռով կպցնում են թերթը վերցնելու համար թղթի ժապաւէններ: Թերթը հարկաւոր է մի քանի ժամանակ բռնել վառարանի առաջ կրակի դէմ, մինչև որ թուղթը լաւ չորանայ ու բաւական տաքանայ. յետոյ իսկոյն թերթը առանց սևացնելու դնում են փայտի սեղանի վրայ և շփում են նրան կոշտ խոզանակով. ապա թերթը դնելով մատուցարանի վրայ, վերցնում են էլի բռնելով ժապաւէններից. այժմ մատերնիդ մօտեցնելով մատուցարանին, կըստացուի լաւ նկատելի կայծ. այդ դորձողութիւնը կարելի է կրկնել մինչև 8 անգամ և միշտ յառաջ կը գայ փայլուն կայծեր: Հիմա պատրաստ ունե-

նալով մեր ձեռքի տակ այդ ելէքտրական մեքենան, հեշտ է մեզ համար սարքել լեյդենեան շիշ։

Վերցրէք մի բաժակ, կիսով չափ լցրէք արճիճի կոտորակներով, որոնց մէջ խրեցէք մի մետաղէ դրդալ. ելեքտրոֆորը լաւ լարելուց յետոյ, ինչպէս վերը նկարագրեցինք, պէտք է բաժակը մօտեցնել մատուցարանին, թուղթը բարձրացրած միջոցին, այնպէս որ կայծը դիպչի դրդալի կոթին. այդ մի քանի անգամ կրկնելուց յետոյ, այնքան ելեքտրականութիւն կը դումարուի բաժակի մէջ, որ մեր լէյդենեան շիշը արդէն կատարեալ լարուած կը լինի. հիմա կարելի է փոքրիկ ելեքտրական հարուած, դարկ ստանալ, եթէ մի ձեռով մեր բռի մէջ բռնենք բաժակը, իսկ միւս ձեռի ծայրը մօտեցնենք դրդալի ծայրին։



Այստեղ բաւական ենք համարում կնքել առաջին շրջանը ֆիզիկական երևոյթների տարրական ծանօթութեան։

Չկայ ոչինչ աւելի օգտակար քան նիւթական աշխարհի ասպարէզում արած գործնական աշխատութիւնները և ամեն կերպ դիտողութիւնները։

Գալիլէյը ճոճանակի օրօրման օրէնքը գտաւ, դիտելով եկեղեցում կամարներից երկար պարաններից կախարած կանթեղների ճոճումը։ Պասքալի մէջ առաջին անգամ ծրնաւ ձայների ընութիւնը ուսումնասիրելու գաղափարը, երբ նա մի անգամ լսեց սեղանի միջոցով յախճապակէ

ափսէի ձայնը, որին մէկը անզիտութիւնով խփել էր դանակով և այլն և այլն։

Մենք կարող էինք յառաջ բերել աւելի բազմաթիւ ֆիզիքական փորձեր, որոնց կատարելու համար չի պահանջվում աւանձին գործիքներ, յատկապէս այդ նպատակի համար պատրաստուած, բայց կարծում ենք, յիշածներս էլ բաւական են, որ մեր ուսումնասէր ընթերցողները իրանք արդէն այնքան վարժութիւն ձեռք բերած լինին, որ կարողանան իւրովսանն հնարել նոր նոր միջոցներ իրանց համար փորձեր անելու այն շաւղով, որը մենք դծել ենք նրանց համար։

Հետևեալ գլխում ուրիշ երևոյթների բացատրութեան ձեռնամուխ կը լինիք, որոնց փորձերի համար գրեթէ հարկաւոր չեն որ և է գործիքներ։

ԽԱՉԻԿ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Փ.

ԾՈՐՈՓՈՐ

Նդրկովկասեան երկաթուղու Աղստևի կայարանից մեկնում է մի խՃուղի Ճանապարհ, որ մեզ տանում է մի սքանչելի աշխարհ։ Կայարանը գտնվում է Կուր գետի ընդարձակածաւալ տօթակէզ դաշտավայրում։ Այդ կէտը, որ տասը տարի առաջ ամայի անապատ էր, այժմ ներկայանում է մի դուրեկան սլատկեր տափարակի լայն ծաւալի մէջ, գեղեցիկ շինութիւններով, նորատունկ թարմ վոքրիկ ծառաստաններով, ապրանքների մթերանոցով, խանութներով, քարվանսարաներով. հաՃութեամբ Ճանապարհորդը այստեղ քիչ հանգըստանում է, ապա առաջ մղում իր ուղին։

Կայարանից հեռանալով դէպի արևմուտք եօթ վերստ, անցնում էք Դաղ-քեասաման բազմամարդ մեծ թուրքաբնակ գիւղի միջով, որն ամբողջ թաղուած է խաղողի և մրգաւէտ այգիների մէջ. գիւղումը կայ տասը տարուց ի վեր արքունական երկդասեան կանոնաւոր դպրոց։ Այս տեղից երկու վերստ առաջ գնալով մտնում էք նորակերտ Դաղախ աւանը՝ վայելչաշէն տներով ու խանութներով, ուր նստում է համանուն գաւառի պետը և այլ պատշաՃի պաշտօնեաներ։ Մինչև առաջին վոստային լիՃևանը — Ուզունթալա — քսան և եօթը վերստ է։ Ուզունթալան մեծ հայ գիւղ է, մօտ երեք հարիւր տնից բաղկացած, վոստային լիՃևանից երկու վերստ հեռու, հէնց այնտեղ, ուր սկսվում են լեռները և վերջանում է դաշտը։ Գիւղը շրջապատուած է հոծ այգեստանով և թանձր ծը-

մակով. ունի եկեղեցի երեք քահանայով, դպրոցի պատրաստ շինք, որ դեռ բացուած չէ։

Ուզունթալայից քիչ ներքև մի լայնանիստ սրածայր բլրի վրայ կայ մի աւեր աշտարակ – ռազմական դիտանոց՝ պատերազմական դարերից մնացած. մի այսպիսի աշտարակ էլ կայ աւելի վերև դաշտի վրայ։ Գիւղից վերև անտառում երևում են մի քանի ամայի տաճարներ։ Ուզունթալայից դարձեալ մի քանի վերստ յառաջ վարելով ճանապարհը, հանդիպում ենք բազմաթիւ վիթխարի ընկուզենի և այլ ծառերի և մօտենում ենք սարերի բերանին, մտնում ենք կամաց-կամաց Աղստևի կամ Դիլիջանի նշանաւոր ձորը, որի երկարութիւնն է մօտ 40 վերստ։ Ձորը քանի գնում՝ նեղանում է, լեռները աւելի ու աւելի վեր սլանում. դրանք գլխովին ծածկուած են խիտ անտառներով. բարձրերը և դէպի հիւսիս նայող երեսները՝ գլխաւորապէս կոնաձև եղևնի ծառերով. այդ ձորից դէպի աջ ու ձախ ընկնում են յոգնաթիւ մութ ծորձորներ, որոնց շատերից խոխոջալով վտակներ են գալիս խառնվում Աղստևին, որ որոտալով, մրընչալով սրընթաց հոսում է ահագին ձորի խորերով։ Գետի տիրով, անտառի միջով՝ օձաստոյտ բարձրանում է լաճուղին, ներկայանալով մի բնական ծառուղի։

Դիլիջանի ձորը լիքն է բացառապէս հայ գիւղերով. թուրքերը, որոնք գրեթէ ամենքը սիւնի աղանդիցն են, մեծամեծ գիւղերով ապրում են Կուր գետի տափարակում, մայիսից սեպտեմբեր տեղափոխվում են այս լեռների կատարները ամառն անցկացնելու և նրանց հօտ ու նախիրը արածացնելու. այդ ժամանակ աննկարագրելի նեղութիւններ են տալիս հայերին, ոչ թէ տեղի—արօտների նեղութեան պատճառով, այլ դա կարծես մի սովորութիւն է դարձել նրանց համար, որպէս գայլերը չեն կարող անտարբեր անցնել ոչխարների մօտով. Ղազախ գաւառի թուրքերը նրանց դէմքի գծագրութիւնով ամենևին չեն զանազանվում հայից. դրանց կիները վերջին տարիներս սովորութիւն են արել հագնել հայկական-վրացական տարազի շորեր։ Այս կողմերը հին ժամանակները կոչվում էր Ծորուիորի գաւառ, որ կազմում էր հին Գուգարաց աշխարհի կամ նահանգի մի մասը։ Այստեղի հայերը հին բնիկ վաղնջական ժողովուրդ են. խօսում են մաքուր Արարատեան բառբառով. սրանց խօսակցութեան մէջ

գուն մեծ խաչքարեր, երևի հին ժամանակ կարաւաննե-
րի Ճանապարհը այդ տեղով է եղել։ Գոշա-Վանք փոքրիկ գիւղ
համանուն՝ գիտնական իրաւագէտ Գոշ-Մխիթար մատենագրի
շնած գեղեցիկ վանքով. հովասուն դիրքով, անտառային
ծովի մէջ կորած։ Քարվանսարա, մեծ գիւղ, եկեղեցի, բազ-
մամեայ դպրոց. կետրոնական գիւղ, շատ խանութներով,
քարվանսարաներով. խՃուղու վրայ, փոստային ելևանով։
Մոբուփորի ամեն գիւղերը անտառներով պատած են և լի են
քաղցրահամ աղբիւրների ջրերով. կլիման ամբողջ գաւառում
բացարձակ առողջարար է։ Աղդան—մեծ գիւղ. նշանաւոր է
այստեղի ցորենը, իր առատութիւնով և ընտիր տեսակով։
Պողոս-Քելիսէ, 70 տուն, եկեղեցի, դպրոցի շէնք, (գաստատու-
թիւն չկայ) սրա մօտ կան երկու մեծ կիսաւեր եկեղեցիներ
—ուխտատեղի։ Հաղարծին ուրթ հարիւրամեայ հին նշանաւոր
վանք, երեք գեղեցկաշէն տաՃարներից բաղկացած. 25 տա-
րի առաջ սրան ապատ արաւ Քանաքեռցի Էջմիածնայ միա-
բան Պողոս վարդապետը, որ աշխատասիրութեան, տոկունու-
թեան ու քաջութեան հերոս է. 25 տարի է նա կռվում է
վայրի գազանների և ուազակների հետ. մօտերս նա յոյս ու-
նի իսպառ ապահովացնել իր վանքը. եթէ յաջող ելք ունե-
նայ վանքի անտառի մասին եղած վէՃը, այն ժամանակ նա
կըհասնի իր բուն նպատակին—բնակեցնել վանքի հողերի վը-
րայ մի յիսուն տուն հող չունեցող հայեր և բանալ ժառան-
գաւորաց մի դպրոց, որ վանքը լինի ըստ իր կոչման լու-
սաստիւռ կետրոն։

Դիլիջան, որին տեղացիները ասում են Դիլի, հարիւր տուն
հայ, այնքան էլ ռուս գաղթական բնակիչներով. վեհապանծ
դիրքով, նշանաւոր ամարանոց. եկեղեցով և մի խիստ կա-
նոնաւոր դպրոցով։ Այստեղ կենում է մշտապէս մի գունդ
զօրք, իսկ ամառն էլ Թիֆլիսից գալիս է մի այլ գունդ ա-
մառելու. կայ մէջը բաւական յարմար շինութիւններ, խանութ-
ներ, ատաղձ սղոցելու փոքրիկ գործարան. երկու աւերակ
եկեղեցի և այլն։ Քանդուած գիւղերից կործանուած եկեղեցի-
ներով՝ յայտնի են. Պուճուր-Դիլի, Մաթոսի գիւղ, Փիշիկ, Ղաֆար,
Բախտիար և ուրիշները։

Դիլիջանից երեք վերստ վերև, անցեալ տարուանից սկը-
սել են բանեցնել մի պղնձահանք, որի տալիք արդիւնքը
տակաւին յայտնի չէ։ Այս ձորերի գիւղացիները մեծ քանա-

նկատելի են շատ ընտիր բառեր և ոճեր. մանաւանդ հետաքրքրական է այն հանգամանքը, որ ցարդ գործ են ածում բայերի անկատար ժամանակը հին գրաբառ ձևով. օրինակ փոխանակ ասելու երգում էր, խօսում էր, շինում էր, նստում էր և այլն, ասում են—երգէր, շինէր, խօսէր, նստէր և այլն։ Ուրեմն, անշուշտ, գրականական և հնագիտական շատ պիտանի նիւթեր կան Ծորուիորի հայերի մէջ ժողովելու, եթէ երբէք հետաքրքրող գտնուի։ Օրինակ առաջ բերեմ այս գիւղացիների մի սովորութիւնը։ Համբարձմանից մինչև հունձի սկսուիլը՝ ամեն գիւղ շաբաթուայ մէջ մի օր տօն է պահում, որ կոչվում է հորմի, մեծ խստութիւնով, այսինքն այր ու կին ոչինչ գործի չեն կենում. Դիլիջանում հորմի պահում են երկուշաբթի օրերը, Բարվանսարա գիւղում հինգշաբթի օրերը և այլն։ Հորմի պահում է ժողովուրդը այն սնահաւատութեամբ, որ ցանքսերը չվնասուին կարկուտից, հեհեղից, մորեխից և այլն։

Ծորուիորի հայերը, երկու սեռի մարդիկ էլ, բարձրահասակ, քաջակազմ, մրայոն և բաւական գեղադէմ են. վարում են կղզեացած, խաղաղ, հնաւանդ սովորութիւններով, երկիւղած կենցաղ. պանդխտութեան չեն գնում. չնայած բնութեան ճոխութեան՝ հարուստ չեն. յետամնաց, տգէտ, ճնշուած վերին աստիճանի։ Հիմնական պարարտմունքնին երկրագործութիւնն է, բաւական չափով ունին նմանապէս հօտ և նախիր, որոնց ամառը զբաղում են սարը ընտանիքի սակաւաթիւ անդամների հետ. բացի դրանից ամեն գիւղ ունի խոզի երամակներ, որ պահում են անտառներում։ Այգեպանութիւնով զբաղվում են միայն մի քանի տաք շերտում, տափարակից մօտ գտնուող գիւղեր՝ Ուզունթալա, Աղջուր, Բարվանսարա և այլն։

Բացի շէն և ապատ գիւղերից կան բաւական թուով կործանուած գիւղերի տեղեր, կիսաւեր վանքեր, եկեղեցիներ և այլն։ Ցիշեմ մի քանիսը։ Աղջուր գիւղ՝ մօտ 200 տուն ժողովրդով, եկեղեցով, դպրոցի պատրաստի շէնքով, ուր դեռ ուսում չէ սկսուած. այգեստաններով շրջապատուած, փառաւոր դիրքով. սրա մօտ է Ս. Մակար անունով մի վանք, արեղայ չկայ մէջը, ուխտատեղի։ Սեւ-Քար, լեռների խորերում Ճանապարհից տարակայ գիւղ։ Սրա մօտ էլ Ս. Լուսաւորիչ անունով ուխտատեղի կայ։ Շարխաչ—փոքրիկ գիւղ. սրա դէմ մի ձորի մէջով, որ դուրս է գալիս մինչև Սևան, կան կան-

կուլթիւնով վառելուկայտ, ածուխ և մասամբ ատաղձ են արտահանում Եր.ևան։ Դիլիջանից վերև է կանգնած այն բարձրաբերձ լեռնաշղթան, որ բաժանում է հին Գեղարքունիքի նահանգը Գուգարաց աշխարհից. այդ շղթայի նշանաւոր գագաթներն են՝ Մայմեխ Մարիամ-դաղ, Փիր-դաղ — գլուխն ուխտատեղի, Գեոգդաղ—կանաչ սար և այլն։ Մի Հարտարաշէն կամաւ ուղիով երկու ժամում Դիլիջանից վեր ենք սլանում այդ լեռների գլուխը, որտեղից բացւում է նոր հակապատկեր տեսարան—մերկ հրաբղխային լեռներ, շրջապատած են մի մեծ երկնագոյն նագելի լիճ, որի մէջ կայ մի փոքրիկ կղզի մենաստանով. այդ է Սևանը, որ պիտի նկարագրեմ միւս անգամ։

Ն. ՏԷՐ-ԱԻԵՏԻՔԵԱՆ



ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Առողջապահական գիտելիք։—Ով սիրում է փոքրիկ ճանապարհորդութիւններ անել ոտով, այնպիսին իր ոտները վնասուելուց պաշտպանելու համար՝ պիտի բոլոր ժամանակ հագնէ բրդէ հաստ գուլպաներ. ամեն առաւօտ ոտքերի մատերի արանքները, ոտերի տակը եւ ետուը շփէ անթաց հասարակ դեղին սապօնով եւ ամեն երեկոյ քնելուց առաջ՝ տաք ջրով ոտերը լուանայ. լաւ կըլինի, եթէ այդ ջրի մէջ խտանուի մի քիչ սպիրտ։

—

Ճանապարհորդութիւն դէպի բեւեռը։—Ամերիկական մի քաղաքացի Չիկագոյից, յայտարարել է Միացեալ Նահանգների ծովակնացութեան նախարարին, որ նա յաջողակ կերպով վճռել է օդաչութեան կնճռոտ խնդիրը։ Նա պատրաստել է մի ահագին օդապարիկ, որով նա մտադրուած է մի ուղեւորութիւն անել դէպի հիւսիսային բեւեռը։ Օդաչութեանը կարող են մասնակցել 200 մարդ եւ ժամը 70 մղոն տարածութիւն պիտի օդ կտրեն։

—

Երգելու և Ճառելու օգուտը։—Մի բժիշկ իր դասախօսութիւնների ժամանակ իր ունկնդիրների ուշադրութիւնը դարձրեց այն հանգամանքի վրայ, որ նշանաւոր հեղինակ բնագէտ Կիվէյն երիտասարդ ժամանակ թոքախտ ունէր, բայց դարձաւ պրոֆեսսոր, զգալի կերպով առողջացաւ, որովհետեւ նա ստիպուած էր լարել ձայնը։ Երգեցողութիւնը եւ ճառասացութիւնը լաւ վարժութիւններ են թոքերի համար, որովհետեւ ստիպում են խորը շունչ քաշել եւ արագացնում են արիւնաղարձութիւնը թոքերի մէջ. երեւի մի պատճառ էլ այդ է՝ հոգեւորականների երկարակեցութեան։

—

Թնդանօթի և հրացանի փոխարէն։—Առաքելաշուքի եւրոպացի քարոզիչ եպիսկոպոս Ֆօնդօում, հետեւեալ միջոցներն է գործ դնում վայրենիներից պաշտպանուելու համար։ Նա հրամայում է զօրքին հրշէջ մեքենայով ջուր ցայտեցնել վայրենիների վրայ, որից նրանք գետին տապալուեն. ապա յանկարծ փայլեցնել մեծ էլեքտրական լոյս, որ խիստ տպաւորութիւն է անում վայրենիների վրայ։

—

Մնողների մասնագիտութիւնը երանց զաւակների վերաբերութեամբ։—Մի ուսումնական քննելով Լօնդօնի յայտնի դիտական հասարակութիւնների անդամների զաւակները՝ եկել է այն եզրակացութեան, որ ամենից ուշիմ եւ ընդունակ են լինում իրաւաբանների երեխաները, երկրորդ տեղը բռնում են իրանց մըտաւորական կարողութիւնով, բըժիշկների զաւակները։ Թթամիտների եւ ապուշների ամենամեծ տոկոս հաշուում է աստուածաբանների սերունդի երեխաներում, վասն զի նկատուած է, որ ընդհանրապէս, ֆիզիքապէս եւ մտաւորապէս թոյլ բնաւորութեան տէր մարդիկն են դիմում այդ մասնագիտութեան. կան եւ ուրիշ պատճառներ, որոնք հէնց յատուկ են ուսման այդ ճիւղին։

—

ԱՖՐԻԿԱՅԻ ԳԱՋԱՋՆԵՐԸ

Որերս ֆրանսիական ազգային ճեմարանում կարդացուեցաւ մի զրուԹիւն, որ վերաբերում էր գաջաջների գոյուԹեան. հին բանասէրները մատնացոյց են անում, մանաւանդ Նեղոսի վերին ճահճային ափերի վրայ, որպէս տեղի բնակեցուԹեան գաջաջների—մարդկային ցեղի ամենամանր ներկայացուցիչների։ Հին ժողովուրդները առաւելապէս աւելի հետաքրքրվում էին գաջաջների ցեղով և ունէին այդ մասին բազմապատում աւանդուԹիւններ, հեքիաԹներ և ծայրայեղուԹեան հասցրած տեղեկուԹիւններ։ Նորագոյն հետազօտուԹիւնները յայտնագործեցին, որ չիրաւի կան Աֆրիկայի խորքերում արտասովոր փոքրիկ հասակով, վտիտ մարմնով նեգրերի մի ցեղ, ի հարկէ վայրենի վիճակի մէջ, որը սակայն այժմ իսպառ ջընջուելու վրայ է։

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Առաջ. Գրաշար Ե. Աւետիսեանի.

Մէկ բառ փնտրեցէք երեք վանկանի,
Որ մեզ ամենիս լինի սիրելի.
Առաջին վանկն է անուն մի ազգի,
Որ ստացել է մի քաջից յայտնի.
Եթէ միացնենք միւս երկոքին վանկ,
Աւելի անուշ մի բառ կըստանանք:
Ինչ՞ը չենք կրում այդ բառի համար—
Զարչարանք ու վիշտ բաղում, անհամար.
Նրանից հեռու միշտ նրան ենք լիշում,
Սրտի խորքերից ա՜խ ու վա՜խ քաշում...

Դէ՜հ, զտէք տեսնեմ, թէ սա ի՞նչ բան է,
Որ մեր ամենիս խելքը կրտանէ:

Բունդլը բլիթ մի շահի,
Կէսը կեր, կէսը պահի:

Հէնց սև ա, սաթի նման,
Հէնց սպիտակ ա, կաթի նման:

Մի կժումը երկու գոյն ջուր:

Կանաչ կըհինեմ, կարմիր կըգործեմ, սև կըկտրեմ։

Առաջ. Վանանդեցու.

ԳՏԷՔ ՏԱՍՆՈՒՉՈՐՍ ԲԱՌ.

1. Մի չորքոտանի գիշատիչ գազան. (յոգն. ուղ. հոլ.) 29, 35, 36, 37, 13, 14.
2. Փայտ կտրելու գործիք, 4, 31, 32, 33, 10.
3. Ստացական դերանուն. 1, 15, 16.
4. Կաթնեղէն. 7, 27, 26, 24, 25.
5. Իական դերանուն 41, 5, 6.
6. Հարս բառի նոյնանիշը 30, 47, 48.
7. Հարցական դեր. 18, 19, 3, 38.
8. Անօթ բառի նոյնանիշը 2, 21, 9, 44.
9. Ցուցական դերանուն 23, 17.
10. Իական բայ (սահմ. ներկ. յոգն. բ. դէմք) 39, 28.
11. Մի նախադրութիւնը 40, 42, 20.
12. Հացաբոյսերի չափ (զրաբառ) 34, 11, 43.
13. Պարան, չուան բառերի նոյնանիշը 46, 22, 12.
14. Մի երկբարբառ 8, 45.

1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12
13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24
25	26	27	28	29	30
31	32	33	34	35	36
37	38	39	40	41	42
43	44	45	46	47	48

Գտնուած բառերի տառերը պէտք է դասաւորել այս քառակուսիների մէջ եղած թուերի տեղ, իրանց դէմ եղած թուանշանի համաձայն, այնպէս որ ստացուի մեր մի յայտնի բանաստեղծի երկու տող ոտանաւորը։

ՁՈՒՏԱՍԵԼՈՒԿ—ՀԱՆԵԼՈՒԿ

Լար ու լար, երգէն ու վար, երկու կաքաւ գնալ ու գալ։

ՐԵԲՈՒՍ



Նախընթաց №-ի մէջ Հանելուկների և ցանցերի բացատրութիւնները։ Հանելուկների բացատրութիւնը՝ 1) վառարան. 2) թուղթ և գրութիւն։

		Ս		
	տ	ի	կ	
Ս	ի	մ	ո	ն
	կ	ո	ւ	
		Ն		

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ